



ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի ընթերցող,
քո դատին է ներկայացվում «Բանբեր
Հայաստանի գրադարանների» հանդեսի վեցերորդ
համարը:

Հոդվածները ներկայացված են ըստ հետևյալ թեմատիկ ուղղությունների՝ «Գրադարանային կրթություն», «Մշակութային ժառանգություն», «Մատենագիտություն. տեսական և գործնական խնդիրներ», «Համայնքային գրադարան», «Գրադարանային վիճակագրություն և վերլուծություն»:

Հավատարիմ մնալով ամսագրի որդեգրած սկզբունքներին՝ ներառել ենք մագիստրոսական երկու ավարտաճառեր՝ պաշտպանված ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» և ՀՊՄՀ «Թանգարանագիտություն, գրադարանագիտություն և մատենագիտություն» ամբիոններում:

2018 թ. մայիսին նշվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորման և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյա տարելիցները: Մեկ հոդվածով անդրադարձել ենք Հայաստանի Առաջին Հանրապետության մամուլին: Թեման շատ տարողունակ է, և հուսով ենք, որ հոդվածը կունենա շարունակություն:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX I ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ գրադարանային կրթություն, Գիտակրթական միջազգային կենտրոն, Եվրամիության «Տեմպուս» ծրագիր

Keywords. Library Education, International Scientific Educational Center, European Union Tempus programme.

Մեր այսօրը, ներկայիս կյանքը դժվար է պատկերացնել առանց համակարգչի, համացանցի, սոցիալական հարթակների և դրանց հենքի վրա ստեղծվող թվային բովանդակություն՝ լինի այն էլեկտրոնային գրքի, նորությունների ժապավենի, տեղեկատու շտեմարանի կամ էլ տեսալսողական նյութի տեսքով:

Աշխարհում հրատարակվում են բազմաթիվ գրքեր և հոդվածներ, որոնցում վերլուծվում են տեղեկատվական հասարակության հիմնադրույթները, քննարկվում են դրանց զարգացման հեռանկարները: Եվրոպական Միությունը Հայաստանի թվային օրակարգի ձևավորման համար հատկացնում է զգալի միջոցներ, արդեն իսկ գործում է «Թվային Հայաստան» հիմնադրամը: Բնական է, որ Հայաստանի գրադարանները ևս անմասն չեն այս գործընթացներից: «Բանքեր Հայաստանի գրադարանների» հանդեսում արդեն իսկ հրատարակվել են այս թեմային նվիրված հոդվածներ^{1, 2, 3}:

«Գրադարանային-մատենագիտական բարձրագույն կրթության պատմությունից» հոդվածում⁴ անդրադարձ է արված գրադարանավար մատենագետների

¹ Զարգարյան Տիգրան, [ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ. \(ՀԱՅԱՑՔ 25 ՏԱՐՎԱ ԱՆՑԱԾ ՈՒՂՈՒՆ\)](#). Բանքեր Հայաստանի գրադարանների, 2015, թ.1(1), էջ 3-12:

² Հայրապետյան Ներսես [ԹՂԹԱՅԻՆ, ԹԵ՞ ԹՎԱՅԻՆ](#): Բանքեր Հայաստանի գրադարանների, 2017, թ.1(3), էջ 2-10:

³ Սուքիասյան Գագիկ, [ԳԻՐՔԸ ԵՎ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XX I ԴԱՐԻ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒՄ. \(գրադարանային-տեղեկատվական վերլուծություն\)](#). Բանքեր Հայաստանի գրադարանների. 2017, թ. 2(3), էջ 19-27:

⁴ Սուքիասյան Գագիկ, [ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԶՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ](#). Բանքեր Հայաստանի գրադարանների, 2015, թ. 1(1), էջ 29-44:

պատրաստմանը հանրապետությունում, խորհրդային շրջանում կատարված աշխատանքներին, նաև ներկայացված է դիպլոմավորված գրադարանավարների պատրաստման վիճակը նորանկախ Հայաստանում:

Սույն հոդվածում կանգ կառնենք ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնի գործունեությանը: Այն հիմնադրվել է 2009 թ., Եվրամիության Տեմպուս 145021 -Tempus-2008UK- JPCR միջազգային ծրագրի շրջանակում: Ամբիոնի հիմնադրումը պայմանավորված էր թվային գրադարանների նախագծման բնագավառում Եվրոպական փորձի կիրառմամբ, որակյալ կադրեր պատրաստելու անհրաժեշտությամբ: Առարկայաշարերը կազմվել են հիմք ընդունելով Ռոբերտ Գորդոնի /Աբերդեն, Շոտլանդիա/, Բարսելոնայի /Իսպանիա/, Պարմայի /Իտալիա/, Րեգելների /Լիտվա/ համալսարանների նմանատիպ ամբիոններում դիպլոմավորված մագիստրոսներ պատրաստելու ուղղությամբ կուտակված փորձը և ուսումնական պլանները: Հայաստանից, որպես գործընկեր կառույց, հանդես է եկել ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացների ցանկը բերված է աղյուսակ 1-ում, իսկ տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացների ցանկը բերված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1

h/h	Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ	Կրեդիտ	Ժամաքանակ			Գնահատման ձևը
			Ընդհանուր	Լսարանային	Ինքնուրույն	
1	Տեղեկատվական տեխնոլոգիաներ և թվային գրադարաններ:		150	18	32	Քնն.
2	Արխիվագիտություն:		120	12	08	Քնն.
3	Մեքենաընթեռնելի քարտագրում, հեղինակավոր գրառումներ:		120	12	08	Քնն.
4	Գրադարանային տեղեկատվական		120	18	102	Քնն.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

	ցանցերի նախագծում և կառավարում:					
5	Ծրագրավորման լեզուների ներածություն:		120	18	102	Քնն.
6	Ծրագրավորման լեզուներ (JAVA):		120	12	108	Քնն.
7	Վեբ ծրագրավորում:		120	12	108	Քնն.
8	Հեռաուսուցման հիմունքներ:		90	12	78	Քնն.
9	Փաստագիտություն:		90	12	78	Քնն.
10	Գրադարանային կայքերի ձևավորում:		90	12	78	Քնն.
11	Մշակութային հիշողության պահպանում և թվայնացում:		180	18	162	Քնն.
12	Գրադարանային շուկայաբանություն:		120	18	102	Քնն.
13	Մտավոր սեփականության իրավունքի ներածություն, հեղինակային իրավունք:		120	12	108	Քնն.

Աղյուսակ 2

h/h	Տիտղոսային ծրագրի կամ ընտրական դասընթացներ	Կրեդիտ	Ժամաքանակ			Գնահատման ձևը
			Ընդհանուր	Լսարանային	Ինքնուսույն	
13	Տվյալների շտեմարաններ:		90	12	78	Քնն.
14	Ինտեգրացված գրադարանային համակարգեր:		90	12	78	Քնն.
15	Տվյալների շտեմարանների ձևավորում:		90	12	78	Քնն.
16	HTML լեզվի ներածություն:		90	12	78	Քնն.
17	Լինուքս համակարգի կիրառումը գրադարանային գործում:		90	12	78	Քնն.
18	Քարտագրում և դասակարգում:		90	12	78	Քնն.

Ուսումնական գործընթացում ներառված են նաև ընդհանրական, լրացական և մասնագիտական դասընթացներ /12 կրեդիտ/, ինչպես նաև առկա է հետազոտական հատվածը /48 կրեդիտ/:

Իր գոյության 10 տարիների ընթացքում ամբիոնն ունեցել է 100-ից ավելի շրջանավարտներ, թե՛ Հայաստանից և թե՛ արտերկրից: Ամբիոնում իրականացվել

են գիտական, ուսումնամեթոդական հետազոտություններ, որոնք առնչվում են թվային գրադարանների նախագծման ու կառուցման բնագավառներին, պատրաստվել են գիտական կադրեր: Կատարելագործելով ուսուցման բովանդակությունը՝ սերտացվել է միջազգային գիտակրթական համագործակցությունը մասնագիտական ոլորտում:

Որպես ձեռքբերում պետք է նշել, որ մեր շրջանավարտները որպես կառույցների տնօրեններ, բաժնի վարիչներ և առաջատար մասնագետներ ներգրավված են Հայաստանի տարբեր գրադարաններում, թվային գրադարանի տարբեր հանգույցների ձևավորման աշխատանքներում: Այս անձինք ոլորտի վերաբերյալ նոր տեսլական ունեցող մասնագետներ են, ովքեր ինքնուրույն կարող են ձևավորել գրադարանային կայքէջեր, ինչպես նաև ակտիվ ներգրավվածություն ունեն «Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի» ձևավորման աշխատանքներում: Տեղերում գրադարանավարների համար կազմակերպում և անցկացնում են սեմինար պարապմունքներ:

Ներկա պահին ընթացքում են երեք խոշորածավալ՝ «Հայաստանի գրադարանների համահավաք քարտարանի ձևավորում»⁵, «Հայ գիրք»⁶ շտեմարանի և «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակի»⁷,⁸ ստեղծում նախագծերը: Երեք նախագծերում էլ շոշափելի է ԳԿՄԿ «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» ամբիոնի շրջանավարտների մասնակցությունը և ներդրումը:

Վերլուծելով Հայաստանի ազգային գրադարանի կողմից հրատարակվող «Հայաստանի գրադարանները. աշխատանքների վիճակագրական վերլուծություն» ամենամյա տեղեկագրերը՝ հանգում ենք ցավալի եզրակացության. գրադարանային բարձրագույն կրթություն ունեցող մասնագետների թիվը խիստ փոքր է գրադարաններում աշխատող դիպլոմավորված մասնագետների ընդհանուր շարքում:

Հուսանք, որ այն երիտասարդ մասնագետները, ովքեր իրենց ապագան ցանկանում են կապել, կամ արդեն կապել են գրադարանների և գրադարանային գործի հետ, իրենց մագիստրոսական կրթությունը կշարունակեն ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում գործող «Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ» բաժնում: Արդյունքում մեր երկիրը կունենա թվային դարաշրջանի մարտահրավերներին պատրաստ մաս-

⁵ <http://armunicat.nla.am/>

⁶ <http://haygirk.nla.am/>

⁷ <http://tert.nla.am/>

⁸ Զարգարյան Տ. Կ., Ղազարյան Հ. Կ. «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակը». *Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2017, թ. 3, էջ 289-300:*

նագետներ, ովքեր կդիմակայեն գիտելիքահենք հասարակության կողմից առաջադրված մարտահրավերներին:

SUMMARY

The department of “Library Information Sources” of the International Scientific and Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia was founded in 2009 within the framework of EU 145021 – Tempus–2008UK-JPCR international project. The establishment of the department was conditioned by the necessity of preparing highly qualified staff in the area of digital library projects. The students having completed this Master Study program are ready to work in the areas of library administration, public and technical services, information and bibliography, as well as in public, school, academic and special libraries. The paper presents goals of the department, and subjects and credits earned by the students.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Բանալի բառեր՝ կուսակցություն, մամուլի պատմություն, Հայաստանի Առաջին
Հանրապետություն, Պառլամենտ:

Keywords. Political party, Press history, First Republic of Armenia, Official, Parliament.

1918 թ. մայիսի 28-ին Թիֆլիսում գտնվող Հայոց ազգային խորհուրդը ընդունել է հռչակագիր, որով իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Հունիսի սկզբին հրապարակել է հաղորդագրություն, որում ասվում է. «Հայոց ազգային խորհուրդը այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, մայիսի 28-ին որոշեց հռչակել Հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայաստանի ժողովրդավարական հանրապետությունը»:

Դրամատիկ, ծանր ժամանակներ էին. պատերազմի հետևանքով քայքայված տնտեսություն, ֆինանսական ու պաշտպանական համակարգերի բացակայություն, հայրենազրկված գաղթականություն, սով, համաճարակներ, ազգամիջյան բախումներ: Դժվարագույն ժամանակների բնորոշումը Կառավարությունը իր ծրագրային Հայտարարության մեջ /Դեկլարացիա/ բնութագրում է մեկ բառով՝ «կատաստրոֆային»¹, սակայն նույն Կառավարությունը, գիտակցելով օրենսդիր, գործադիր, դատական մարմինների ձևավորման և գործունեության կարևորությունը պետության կայացման գործում, քայլեր է ձեռնարկում նաև մշակութային, գիտական և ուսումնական հաստատությունների ստեղծման, ազգաբնակչության կրթական մակարդակի ու տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ: Այսպես, 1919 թ. վերջերին հանրապետությունում ստեղծվել էր տարրական և միջնակարգ դպրոցական կայուն ցանց²: 1919 թ. հուլիսի 4-ին ընդունվեց «Պետական Մատենադարանի մասին» օրենքը, 1920 թ. հունվարի 31-ին բացվեց Հայաստանի պետական համալսարանը: Պետական այրերը խորապես գիտակցում էին պետականաշինարարության, հասարակական-քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքի մասին քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու, ազգային

¹ Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն.- Փարիզ, 1928.- էջ 130-131:

² Վարդանյան Գ. Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.)- Ե., 2003.- էջ 27:

ինքնագիտակցության պահպանման, անկախ պետականության քարոզչության գործում լրատվամիջոցների անփոխարինելի դերը:

Հայաստանի առաջին Հանրապետության տարածքում տվյալ ժամանակաշրջանում շարունակվում էր տպագրվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերականը «Արարատը» /Վաղարշապատ, 1868-1919 թթ./³: Նախատեսված էր շարունակել հանդեսի տպագրությունը նաև 1920 թ.՝ «...չորս ամիսը մի անգամ» պարբերականությամբ⁴, սակայն այլևս ոչ մի համար լույս չի տեսնում:

1918-1920 թթ. ՀՀ-ում հրատարակվել է 50 անուն պարբերական⁵, որից 29-ը՝ Երևանում, 13-ը՝ Ալեքսանդրապոլում, 3-ը՝ Վաղարշապատում, 2-ական՝ Գորիսում և Կարսում, 1-ը՝ Աշտարակում: Հրատարակված մամուլը ըստ ուղղվածության կարելի է բաժանել 4 խմբի՝ պաշտոնական /3 անուն/, կուսակցական /15 անուն/, մասնագիտական (գերատեսչական) և մանկապատանեկան /աշակերտական/: Օրենսդիր մարմնի՝ Պառլամենտի օրգանը «Հայաստանի Հանրապետութիւն. Օրէնքների հաւաքածու»-ն է: Լույս է տեսել 1919 թ. նոյեմբերից մինչև 1920թ. հունիսը՝ ընդամենը 19 համար: Առաջին համարը պարունակում է հունիսին անցկացված ընտրությունների արդյունքում ձևավորված պառլամենտի նախագահության ընտրության և այլ խնդիրների մասին 11 նյութ /8 որոշում, 3 օրենք/, ինչպես նաև Հայաստանի Պառլամենտի Նախահաշիվը՝ 1919 թ. օգոստոսի 1-դեկտեմբերի 31 ժամանակահատվածի համար՝ պատգամավորների օրապահիկի, նախագահի, Պառլամենտի դիվանի, տնտեսական, գրենական պիտույքների, շենքի վարձակալության և այլ ծախսերի մասին՝ ընդամենը 1.822.580 ռուբլի: Ներկայացված է նաև Պառլամենտի դիվանի կազմը: «Հայաստանի Հանրապետութիւն. Օրէնքների հաւաքածու»-ն Պառլամենտի գործունեության, ընդունված որոշումների ու օրենքների արտացոլումն ու վավերագրությունն էր: ՀՀ գործադիր մարմնի օրգանը «Կառավարութեան լրաբեր»-ն է /1918-1920 թթ./, որը շարունակությունն էր «Լրատու Երևանի ազգային խորհրդի» պարբերականի /1918 թ., լույս է տեսել ընդամենը 6 համար/: Նախատեսված էր «Կառավարութեան լրաբեր»-ը լույս ընծայել շաբաթական երկու համար՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին: Խմբագրությունը, նկատի ունենալով ՀՀ ժողովրդագրական պատկերը, նախատեսում էր «Լրաբերի» պաշտոնական մասը հրատարակել ոչ միայն հայերեն, այլև ռուսերենով և թուրքերենով⁶: Սակայն թուրքերենի գրաշար բանվորների բացակայության պատճառով պարբերականի

³ 1880-1884 թթ. Երևանում տպագրվել է «Պսակ» լրագիրը:

⁴ Ազդ: «Արարատ»ի հրատարակությունը, Էջմիածին, 1920, թ. 1, 1 հունվարի, էջ 16:

⁵ Արցախի Հանրապետության մամուլը չի ներառված, դրան կանդիդատանք առանձին հոդվածով:

⁶ Խմբագրության կողմից, Կառավարութեան լրաբեր, 1918, թ. 1, 1 սեպտ., էջ 1:

չորրորդ էջը հրատարակվում է միայն ռուսերենով: Պարբերականը հանրությանը իրազեկում էր կառավարության գործունեության մասին:

Հանրապետությունում կային մի շարք կուսակցություններ, որոնցից ամենաակտիվ գործունեություն ծավալած և Պառլամենտում ներկայացված էին ՀՅԴ-ն, ՀԺԿ-ն, Սոցիալ-դեմոկրատ և Սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունները: Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր գաղափարական խոսափողը՝ տպագիր օրգանը: Ըստ գաղափարական-քաղաքական ուղղվածության և քաղաքական դաշտում գրաված դիրքի՝ ՀՀ կուսակցական մամուլը կարելի է բաժանել երեք թևերի՝ ձախ կենտրոնամետ /ձախակենտրոն/, ձախակողմյան և աջակողմյան⁷: Կուսակցական մամուլի անվանումների գերակշիռ մասը՝ 9 անուն, կառավարող կուսակցության՝ ՀՅԴ-ի պարբերականներն էին /«Աշխատանք», «Արարատեան աշխատաւոր», «Զանգ», «Հայաստանի աշխատաւոր», «Յառաջ», «Շանթ», «Շիրակի աշխատաւոր», «Որոտան», «Սինիք»/: «Աշխատանքը» /խմբ.՝ Հմայակ Մանուկյան/ սկսեց տպագրվել Երևանում 1916 թ. մայիսի 4-ից: Այն իրապես 1910-1915 թթ. Վանում տպագրվող և ընթերցողական լայն լսարան ունեցող նույնանուն թերթի վերահրատարակությունն էր: «Ժողովրդով եւ ժողովրդի համար» սկզբունքով առաջնորդվող պարբերականը իր առաջ մեկ գերագույն խնդիր էր դնում՝ «թուրքահայի ֆիզիքական ու մշակութային գոյութիւնը»⁸: Լայնորեն անդրադառնում էր Երևանում, Էջմիածնում, գավառներում ապաստանած գաղթականության կեցության, պարենով ապահովման խնդիրներին: Կարևորում էր կրթության՝ արևմտահայերենով կազմակերպման հարցերին: «Աշխատանքը» փակվեց 1919 թ. սեպտեմբերի 13-ին: Երևանում հրատարակվող դաշնակցական մամուլը իր բնույթով կիսապաշտոնական էր և իր էջերում տպագրում էր ոչ միայն կուսակցական-կազմակերպչական, այլև կառավարության վարած ներքին ու արտաքին քաղաքականության, Պառլամենտի գործունեության վերաբերյալ նյութեր: ՀՅԴ պարբերականների խմբագիրները ժամանակի մտավորականության նշանավոր գործիչներ էին: Այսպես, Սիմոն Վրացյանը եղել է «Յառաջ», «Զանգ», «Հայաստանի կօօպերացիա» պարբերականների առաջին խմբագիրը: «Զանգը» ՀՅԴ Երևանի ԿԿ պաշտոնաթերթն էր. այն խմբագրել են նաև Արշավիր Ղազարյանն ու Նիկոլ Աղբալյանը: Լույս է տեսել 1917 թ. նոյեմբերի 9-ից մինչև 1919 թ. ապրիլի 6-ը: Խմբագրականներում, «Գավառ», «Վերջին լուրեր», «Ներքին կեանք» և այլ խորագրերի ներքո ներկայացվում էր կառավարության վարած քաղաքականությունը: Սիմոն Վրացյանը խմբագրա-

⁷ Հակոբյան Ա. Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն.- Ե., 2005.- էջ 5:

⁸ *Երկու խոսք*, Աշխատանք, 1916, թ. 1, 4 մայիսի, էջ 1:

կաններում հաճախ սուր քննադատական հայացքով և անաչառությամբ էր վերաբերվում զեղծարարության, պաշտոնական դիրքի չարաշահումների, տեղական չինովնիկների անարդարությունների և այլնի մասին: Նյութեր էին հրատարակվում ոչ միայն սոցիալ-տնտեսական հարցերի, այլև կրթության, լուսավորության, մայրենի լեզվի խնդիրներին նվիրված: Նրա իրավահաջորդը «Հայաստանի աշխատատուր» եռօրյա թերթն է /խմբագիր՝ Վահան Խորենի (Վահան Տեր-Գևորգյան)/: «Յառաջի» «Հայաստանի պառլամենտ», «Վերջին լուրեր», «Անդրկովկաս», «Տնտեսական», «Հեռագիրներ», «Կօօպերացիա» բաժիններում ներկայացվում էին պետականաշինարարության աշխատանքները, կրթության ու լեզվի խնդիրները, արտաքին և ներքին իրադարձությունները և այլն: Լույս է տեսել 1919 թ. սեպտեմբերի 20-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 1-ը՝ ընդամենը 264 համար: ՀՅԴ կուսակցական մամուլի մյուս անունները տպագրվում էին հանրապետության հետևյալ քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում «Շիրակի աշխատատուրը», Էջմիածնում «Արարատեան աշխատատուրը», Գորիսում «Որոտանն» ու «Սինիքը», Աշտարակում «Քասախը»:

1917 թ. Թիֆլիսում ռուսական սահմանադիր-դեմոկրատական /կադետական/ կուսակցության հայ անդամները, որոնք համախմբված էին «Մշակ»-ի շուրջը, գումարեցին Հայ ժողովրդական կուսակցության /ՀԺԿ/ հիմնադիր ժողովը⁹: 1918 թ. օգոստոսից սկսեց լույս տեսնել ժողովրդական կուսակցության ԿԿ և Երևանի քաղաքային կոմիտեի տպագիր օրգանը «Ժողովուրդը» / խմբագրական կազմ՝ Երվանդ Հարությունյան, Տիգրան Հախումյան, Հովհաննես Ստեփանյան/, որը խնդիր էր դրել նպաստելու «...օրենսդրական ճանապարհով իրագործելու մեր պետութեան մէջ այն հասարակարգը, որ գծագրված է կուսակցութեան ծրագրում՝ քաղաքական քաղաքացիական, օրենսդրական, ֆինանսական, բանուորական, կրօնական, լուսավորութեան, ու այլ հարցերի վերաբերմամբ»¹⁰: Ժողովրդական կուսակցությունը 1918 թ. նոյեմբերից մինչև 1919 թ. հունիսի կեսերը ՀՅԴ-ի հետ կռիվից էր կազմել¹¹: Այդ ժամանակաշրջանում պարբերականը ոչ ընդդիմադիր կեցվածք էր ընդունել: «Ժողովուրդը» անդրադառնում էր կռիվից հառապարության՝ հատկապես իր կուսակցությունը ներկայացնող նախարարների գործունեությանը. պետք է ասել, որ կռիվից հառապարության 4 անդամները ՀԺԿ-ից էին: Հանրային կրթության և արվեստների պաշտոնավարած 6 նախարարներից երկուսը՝ առաջին նախարար Միքայել Աթաբեկյանն ու Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը, նույնպես ՀԺԿ-ականներ էին: Վերջինս որոշիչ դերակատարություն է ունեցել

⁹ Հայկ. Առաջադիմական կուսակցութեան ժողովը, Մշակ, Թիֆլիս, 1917, թ. 59, 18 մարտի, էջ 3:

¹⁰ Խմբագրութեան կողմից, Ժողովուրդ, 1918, թ. 1, 14 օգոստոսի, էջ 1:

¹¹ Հայ Ժող. կուսակցութիւն, Ժողովուրդ, 1918, թ. 13, 6 հոկտ., էջ 3:

«Պետական գրադարան-մատենադարանի» օրենքի ընդունման (1919 թ. հուլիսի 4-ին) նախապատրաստական աշխատանքներում: Կոալիցիոն կառավարությունից դուրս գալուց հետո ՀԺԿ-ն դառնում է ծայրահեղ ընդդիմադիր և ՀՅԴ-ական կառավարության անխնա քննադատ: Կուսակցության այդ դիրքորոշումները արտահայտվում են «Ժողովուրդի» էջերում: Իր «Ներքին կեանք», «Վերջին լուրեր», «Դատաստանական», «Քրոնիկոն», «Արտասահման» բաժիններում պարբերականը անդրադարձ էր կատարում բազմապիսի իրողությունների և խնդիրների: ՀԺԿ մամուլի մյուս անունը «Նոր կեանքն» էր /Ալեքսանդրապոլ, 1920 թ./:

Ռամկավար-ազատականների /Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն/ մամուլի օրգանը «Վան Տոսպն» էր: Այն տպագրվել է 1911-1915 թթ. Վանում, ապա 1915-1918 թթ.՝ Թիֆլիսում: 1919 թ. մարտի 24 - հունիսի 23-ը այն շարունակվում է տպագրվել Երևանում: ««Վան Տոսպը», որպես թիրքահայ ճղակոտոր մտաւորականութեան մէկ մասի արտայայտութիւն, կուգայ դարձեալ իր ծայնը հնչեցնելու»¹²: Սրա իրավահաջորդը կուսակցական պաշտոնաթերթ «Հայաստանի ծայնն» էր: Լոյս է տեսել 1919 թ. սեպտեմբերի 22 - 1920 թ. նոյեմբերի 28-ը Երևանում /խմբ.՝ Արտակ Դարբինյան/: Առաջին համարի խմբագրականում ամրագրվում է պարբերականի հետաքրքրությունների շրջանակը՝ Տաճկահայաստանի, արևմտահայության, գաղթականության խնդիրները¹³:

Ձախ ընդդիմադիր կուսակցություններն էին սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունը /էսէռ/, ՌՍԴԲԿ /մենշևիկներ և բուլշևիկներ/: Էսէռների «Սոցիալիստ-յեղափոխական» պարբերականը լոյս է տեսել գրեթե 1 տարի՝ 1919 թ. մայիս - 1920 թ. ապրիլ: Այս կուսակցությունը բավական ակտիվ էր Ալեքսանդրապոլում, որտեղ էլ հրատարակում է «Լոյսը» 1918 թ., իսկ 1920 թ. կուսակցության Ալեքսանդրապոլի կոմիտեն սկսեց հրատարակել «Աշխատանքի դրօշակը». նույնանուն պարբերականներ էին լոյս տեսնում Բաքվում /1917-1919 թթ./ և Թիֆլիսում /1918-1919 թթ./: ՍՀԿ /էսեռների/ կուսակցական մամուլի վերոնշյալ անունները միննույն հեղափոխական բնաբանն ունեին՝ «Կուռվ կը խլես քո իրաւունքը»: 1920 թ. մարտի 12-ին լոյս է տեսնում կուսակցության ռուսալեզու օրգանը՝ «Знамя труда», որի տպաքանակը բռնագրավվում է կառավարության կողմից: Օրինակը պահպանվել է ՀՀ Ազգային արխիվում: Կուսակցությունն իր խոսափող մամուլի օրգաններն օգտագործում էր՝ ռուսական հեղափոխական տրամադրություններն ու ռուսական բուրժուադեմոկրատական գաղափարները քարոզելու համար:

¹² «Վան-Տոսպ»-ը, Վան-Տոսպ, 1919, թ. 1, 24 մարտի, էջ 1:

¹³ «Հայաստանի ծայն»-ը, Հայաստանի ծայն, 1919, թ. 1, 22 սեպտ., էջ 2:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության /մենչևիկների/ Հաստատանի կազմակերպության և Երևանի բյուրոյի թերթը «Կայծ» է /խմբ.՝ Թադևոս Ավդալբեկյան/: Լույս է տեսել 1918 թ. նոյեմբերի 2 – 1919 թ. օգոստոսի 7-ին: «Լրատու», «Մամուլ», «Գալառ», «Վերջին լուրեր» և այլ խորագրերի ներքո տպագրվող նյութերում պարբերականը ծաղկում էր կառավարության վարած ներքին և արտաքին քաղաքականությունը: «...մեր փափագն է եղեր զգալ, որ մեր հանրապետությունը... իր վարիչների առաջնորդությամբ հաստատ քայլերով դիմում է դէպի դեմոկրատական կարգերը՝ դառնալու համար մի երկիր, որ հպարտ է իր ներքին ազատությամբ ու անկաշառ արդարադատությամբ, սակայն դժբախտաբար նոյնիսկ այս չափաւոր պահանջներին չկարողացաւ բաւարարութիւն տալ անդրանիկ կառաւարութիւնը»¹⁴: Բնաբանն էր «Բոլոր երկրների բանվորներ, միացէ՛ք», տեսականը՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսության բացառիկ ճշմարտացիությունը և դրա հաստատումը: ՀՀ գործադիր և օրենսդիր մարմինների ընդունած գրեթե բոլոր որոշումները դիտվում էին խոշորացույցի տակ ու պարբերականի էջերում քննադատվում էր որոշ գերատեսչությունների վարած «յետադիմական, մեծածախս և կործանիչ» քաղաքականությունը՝ որակվելով հաճախ որպես անհեռատես¹⁵: Այս ծախսակողմյան կուսակցությունը նաև Ալեքսանդրապոլում ուներ իր օրգանը՝ «Մարդկայնութիւնը», որը լույս է տեսել 1918-1919 թթ.:

Ավելի մեծ թիվ էր կազմում ծախսակողմյաններից բոլշևիկյան /մեծամասնականների/ մամուլը: Մինչև Առաջին Հանրապետության հռչակումը Անդրկովկասում արդեն լույս էին տեսնում կուսակցական թերթեր, որոնք հրապարակախոսական կրքով մերկացնում էին տիրող կարգերը՝ կոչ անելով տապալել դրանք¹⁶: 1914 թ. Երևանում լույս տեսած և ընդհատված «Խօսք»-ը /խմբ.՝ Արշավիր Մելիքյան/ շարունակվում է 1918 թ. սեպտեմբերի 22 – 1919 թ. մարտի 22-ը՝ ընդամենը 22 համար: Ակտիվորեն թղթակցել են Ս. Ալավերդյանը, աշխատակցել են Ա. Խանջյանը, Ղ. Ղուկասյանը և այլք¹⁷: «Բոլոր երկրների բանվորներ, միացէ՛ք» բնաբանն ընտրած պարբերականը նույնպես անխնա քննադատում էր կառավարությանը և ծանր վիճակից միակ ելքը համարում էր հետագա ճակատագիրը խորհրդայնացած Ռուսաստանի հետ կապելը: Թերթի խորագրերն էին «Կուսակցական կեանք», «Բանտորական կեանք», «Թերթօն», «Արտաքին տեսութիւն», «Վերջին լուրեր»: 1920թ. հունվարի 11-ին մեծամասնականները Ալեքսանդրապոլում հրատարակում են

¹⁴ Երեք ամիս, Կայծ, 1918, թ. 1, 2 նոյեմբ., էջ 2:

¹⁵ Սոց.-Դեմ. Ֆրակցիայի վերաբերմունքը դէպի զինտրական միմիստրութեան նախահաշիւը, Կայծ, 1919, թ. 1, 15 հունվ., էջ 2:

¹⁶ Երկանյան Վահե: Հայկական մշակույթը 1800-1917 թթ.- Ե., 1982.- էջ 87:

¹⁷ Բարսեղյան Խ. Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1900-1920).- Ե., 1959.- էջ 175:

«Ալիք» թերթի առաջին և միակ համարը. Տպաքանակը բռնագրավվել է¹⁸: «Բան-բերը» /խմբ.՝ Սարգիս Խանոյան/ լույս է տեսել Ալեքսանդրապոլում: «Գիւղացու ծայնը» /խմբ.՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյան/ աշխատավոր գյուղացիական միությունների թերթն էր, հիմնվել է ՌԿ(Բ)Պ Հայաստանի կոմիտեի Արմենկոմի ցուցումով: Լույս է տեսել 4 համար: Վերջին 4-րդ համարը բռնագրավվել է¹⁹: «Լոռվայ գիւղացիութեան ծայնը» /խմբ.՝ Սուրեն Երզնկյան/ Լոռու գյուղացիության և բոլշևիկյան կազմակերպության օրգանն էր. ընդամենը 5 համար է լույս տեսել: Ձախակողմյան մամուլի վերոնշյալ անունների հիմնական դավանանքը Հայաստանի խորհրդայնացման և ապագան Խորհրդային Ռուսաստանի հետ կապելու գաղափարախոսությունն էր:

1920 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին լույս է տեսնում «Էջմիածին» շաբաթաթերթը /խմբագիր՝ Գյուտ ծ. Վարդապետ (Ղազարյան)/: Ի տարբերություն «Արարատի»՝ այն առավելապես աշխարհիկ բնույթ ուներ: Պարբերականի ընդարձակ խմբագրականներում կարևորվում է Հայաստանի անկախության ձեռքբերման, պետականության հաստատման ու ամրապնդման գործում հայ առաքելական եկեղեցու առաքելությունը, անդրադառնում է հողային, հանրային կրթության խնդիրներին, հայ եկեղեցու նշանավոր դեմքերի գործունեությանը: Շաբաթաթերթի վերջին՝ 12-րդ համարը բացվում է Գևորգ Ե կաթողիկոսի՝ հայրենի ազգաբնակչությանն ու զինվորականությանն ուղղված նամակ-կոչով:

Կառավարությունը մեծ կարևորություն էր տալիս հանրապետության պաշտպանունակության բարձրացմանը և նրա երաշխավորի՝ բանակի պատրաստվածության բարձր մակարդակի ապահովմանը: 1920 թ. մայիսին 15-ին լույս է տեսնում Ռազմական նախարարության զորական շաբաթաթերթ «Ռազմիկը», որի նպատակը հայ զորական ուժին ու պետականության կայացմանը սատարելն էր, մարտիկների մեջ ռազմական կարգապահության, զինվորական կարգունկնդի պահպանման կարևորության սերմանումը, հայ ռազմարվեստի պատմության դրվագներով ռազմական սերնդի պատմական դաստիարակությունը: Սակայն հանդեսը, ցավոք, երկար չի գոյատևում: Վերջին համարը լույս է տեսել 1920 թ. նոյեմբերի 29-ին: Հայաստանի ազգային գրադարանում /ՀԱԳ/ պահպանվում է ընդամենը մեկ՝ առաջին համարը: Ռազմական թեմաներով էր նաև «Դիրքերում» օրաթերթը, որը լույս տեսավ Կարսում 1920 թ. հոկտեմբերի 14-ին և տեղեկություններ էր հրապարակում ճակատի ռազմական գործողությունների վերաբերյալ: Լրագրի խմբագրա-

¹⁸ Բարսեղյան Խ. Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1900-1920). - Ե., 1959. - էջ 203:

¹⁹ Բարսեղյան Խ. Տե՛ս նշված աշխատության մեջ, էջ 220-221:

կաններն ու հրապարակած նյութերը ոգևորում էին ճակատը պահող, կյանքը վտանգի ենթարկող զինվորներին, կարևոր շեշտադրումներ անում մարտական դիրքերի անառիկության, Կարսի ռազմավարական նշանակության մասին: «Կարսի բերդը Հայաստանի բանալին է: Կարսը տինք, Հայաստանը պետք է համարել տաճ»²⁰: 1919 թ. դեկտեմբերի 21-ին հրատարակվում է «Բանակի օր» միօրյա թերթը՝ հայ «գրականների» ստեղծագործություններով և հոդվածներով: Թերթի վաճառքից ստացած ողջ հասույթը տրամադրվում է զինվորների համար տոնական ընծաների ձեռքբերմանը:

Սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի քիչ թե շատ կայունացման արդյունքում հանրապետությունում սկսեցին հրատարակվել մասնագիտական պարբերականներ: Այսպես, 1920 թ. տպագրվեց «Գյուղատնտեսական հանդես»-ի առաջին և միակ համարը: Այն Գյուղատնտեսական և պետական գույքի մինիստրության գիտական-ուսումնասիրական օրգանն էր և տպագրում էր ոչ միայն տեսական, այլև վիճակագրական-հաշվետվական նյութեր, անդրադառնում էր Հայաստանում բամբակի մշակության, անասնաբուժության զարգացման, հողերի ոռոգման և այլ հարցերի:

1919 թ. հունվարից լույս է տեսնում կոոպերատիվների միության տպագիր օրգանը՝ «Հայաստանի կոօպերացիա» երկշաբաթաթերթը: Այստեղ տպագրվում էին կոոպերատիվ շարժման զարգացումների, հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի մասին վիճակագրական նյութեր, հանձնարարական գրականության ցանկ՝ կոոպերացիաների մասին: Մեծ ուշադրություն էր դարձվում կոոպերատիվ շարժման մեջ հասարակության բոլոր շերտերի, նաև կանանց ներգրավվածությանը: Բազմաժանր այս պարբերականի տեսական, թարգմանական, գործնական նյութերի լեզուն հարուստ ու ճկուն է, ընդգծվում է բանավոր և գրավոր շփումների մեջ հայերենի՝ հաղորդակցության պարտադիր միջոց դարձնելը: Համարներում հաճախակի հանդիպող «Ամէն տեղ պահանջեցեք հայերէն խօսել և գրել. Կառավարության դիմեցէք հայերէնով»²¹ հրահանգը վկայում էին պատասխանատուների՝ մայրենի լեզվի գերազանցության մասին անշրջելի վերաբերմունքը /Պետական լեզվի մասին օրենքն ավելի ուշ ընդունվեց/: 1920թ.-ի հունվարից սկսած՝ պարբերականը բացում է գրական բաժին, որտեղ հրատարակվում են Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Վ. Տերյանի և այլոց ստեղծագործությունները:

²⁰ Սեպուհ: Կարսի բերդը, Դիրքերում, Կարս, 1920, թ. 1, 14 հոկտ., էջ 1:

²¹ Հայաստանի կոօպերացիա, 1919, թ. 8, 15 ապր., էջ 227:

Առաջին Հանրապետության տարիներին վարակիչ հիվանդությունների ան- նախադեպ տարածվածության պայմաններում դրանց դեմ պայքարի լավագույն միջոցներից է դառնում մամուլը: 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին Երևանի բժշկական ընկերությունը հրատարակում է «Առողջապահիկ» ժողովրդական առող- ջապահական միամսյա հանդեսը, որի գլխավոր խմբագիրը հայտնի բժիշկ Վահան Արծրունին էր: Հրատարակիչները ընդգծում էին, որ ժողովրդի առողջական վի- ճակը բարվոքելու միակ իրական գործոնը նրա գիտակցական վերաբերմունքն է իր անհատական ու հասարակական առողջապահությանը²²: Տրուպիկ հիվանդություն- ների դեմ պայքարի հանրամատչելի պարբերական էր հուլիսին լույս ընծայված «Մալարիա» գիտական-հասարակական հանդեսը, որի խմբագիրներն էին բժիշկ- ներ Լևոն Հովհաննիսյանն ու Աբգար Իսահակյանը: Հասարակական չարիք հա- մարվող այդ հիվանդության դեմ պայքարելու համար ստեղծվել էր հանձնաժողով, որի նպատակն էր ոչ միայն կազմակերպել այդ հիվանդության բուժումը, այլև ուսումնասիրել առաջացման պատճառներն ու կանխարգելման հնարավորություն- ները: Հրատարակիչները կարևորում են մալարիայի տարածման, նրա ախտանիշ- ների, կանխարգելման, հիվանդության պատմության վերաբերյալ նյութերի հրա- պարակումն ու ազգաբնակչության տեղեկացվածության ապահովումը:

Հանրապետության կրթամշակութային կյանքի վերաշինության գործում հե- ղափոխական իրադարձություն էր համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում 1920թ. հունվարի 31-ին: Այդ առթիվ լույս է տեսնում «Հայաստանի համալսարան» միօրյա թերթը: Խմբագրակազմը այն հրատարակում է իբրև «...յաւերժացման նշան» նույն համալսարանի և ողջ հասույթը տրամադրում չքավոր ուսանողների օգնության ֆոնդին²³:

Կուսակցությունները ունեին նաև իրենց աշակերտական մամուլը: Այսպես, դաշնակցական աշակերտական պարբերականներ էին «Շանթ», «Երկիր», «Յոյս», հայ ռամկավարներինը՝ «Վերածնունդը»: 1919 թ. ապրիլից բոլշևիկների նախաձեռ- նությամբ հիմնվել ու Երևանում գաղտնի գործունեություն էր ծավալում կոմունիս- տական երիտասարդական «Սպարտակ» միությունը՝ Ղ. Ղուկասյանի գլխավորու- թյամբ²⁴: Այն հրատարակում է նույնանուն թերթը: Հայաստանի ընդհանուր աշա- կերտական միության կենտրոնական խորհրդի օրգանն էր «Նոր սերունդ» շաբա- թաթերթը, որի խմբագրակազմի անդամներից մեկը Աղասի Խանջյանն էր: Երևա-

²² Մեր նպարակը, Առողջապահիկ, 1920, թ. 1, էջ 2:

²³ Խմբագրութեան կողմից, Հայաստանի համալսարան, 1920, 31 հունվարի, էջ 1:

²⁴ Հակոբյան Ա. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-1920, Ե., 2005, էջ 203:

նի գիմնագիաների կոլեկտիվների ռուսերեն «Знамя школы» շաբաթաթերթը աչքի էր ընկնում խորհրդային գաղափարախոսությունը պաշտպանող հայացքներով:

Երևանի ամերիկյան որբանոցի սաները ունեին իրենց հրատարակությունը՝ «Թոթովանք», հրատարակվում էր նաև «Իդեալ» աշակերտական պարբերականը:

Հայաստանի առաջին հանրապետության 2,5 տարիների ընթացքում լույս տեսած պարբերականները, անկախ իրենց ուղղվածությունից, գաղափարախոսությունից ու ծավալներից, անկախ նրանց խմբագրած ու թղթակցած անձանց գործունեությունից, հրատարակած նյութերի քանակներից, ունեն մեկ ընդհանրություն: Նաև դրանց շնորհիվ է ձևավորվում պատումը՝ անկախ պետականություն հռչակած, դրա խորհրդանիշերը հարգող, ազգային գիտակցության արթնացումին ու ստեղծարար կյանքի վերակերտմանը լծվող Ժողովրդի ու երկրի մասին: Մամուլի հրապարակումներից շահեկան տեղեկություններ ենք քաղում ոչ միայն պետական շինարարության, սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտաքին ու ներքին խնդիրների վերաբերյալ, այլև մշակութային իրադարձությունների, նոր հրատարակվող թերթերի բաժանորդագրությունների, գործող տպարանների, բացվող գրադարանների, բարեգործական աշխատանքների և այլնի մասին: Այսպես, դաշնակցական զոհված գործիչ Միխայիլի հիշատակին Սարիղամիշում «Միխայիլի գրադարան» բացելու²⁵, «Ազատութեան լոյս» գրադարան-ընթերցարանի²⁶, քաղաքային վարչության՝ մինչև 1920թ. մարտի 1-ը բոլոր խանութների ցուցանակները հայերեն դարձնելու խիստ հրահանգի²⁷, Երևանի ուսանողների ու կանանց կազմակերպած՝ ճակատի զինվորների համար «Նւէրների օր» ակցիայի²⁸, «Ռոստոմեան գրադարանի» և այնտեղ պարբերաբար կազմակերպվող դասախոսությունների²⁹, Դսեղում Թումանյանին նվիրված գրադարան-ընթերցասրահ բացելու համագյուղացիների նախաձեռնության³⁰ և այլ շատ հետաքրքիր ձեռնարկների մասին:

Ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարանում Առաջին Հանրապետության մամուլի 50 անուններից 31 անունը ներկայացված է թվային պատճեններով և հասանելի է: Բովանդակությունը հնարավորինս ամբողջացվել է ոչ միայն Ազգային գրադարանի, այլև այլ գրադարաններից ձեռք բերված թվային պատճեններով: Աշխատանքներ են տարվում այդ անունների պակասող համարների, վնասված

²⁵ Միխայիլի յիշարակին, Աշխատաւորի ծայն, 1920, թ. 1, 13 հունիսի, էջ 2:

²⁶ «Ազատութեան լոյս», Զանգ, 1919, թ. 15, 7 փետր., էջ 1:

²⁷ Համաձայն խորհուրդի որոշման Քաղաքային վարչութիւնը յայտնում է..., Ժողովուրդ, 1920, թ. 1, 10 հունվ., էջ 1:

²⁸ «Նւէրների օր», Զանգ, 1918, թ. 39, 4 հունիսի, էջ 1:

²⁹ Հայաստանի Պաղամենտի դահլիճ, Յառաջ, 1919, թ. 80, 31 դեկտ., էջ 1:

³⁰ Յով. Թումանեանի անան գրադարան-ընթերցարան, Յառաջ, 1920, թ. 86, 28 ապր., էջ 4:

Էջերի, ինչպես նաև մյուս 19 անունների թվային պատճենների ձեռքբերման ուղղությամբ:

SUMMARY

The First Republic of Armenia initiated a series of activities for building Statehood and its legislative and executive bodies. Periodicals were playing a crucial role in this process. At that time, in Armenian cities such as in Yerevan, Alexandrapolis, Goris, Kars, Echmiadzin 50 titles of periodicals representing Government, political parties, professional organizations, youth and education were published. Some of these periodicals are preserved in the collections of the National Library of Armenia, some in other organizations; such as in the National Archives, in the Repository of the Ancient Manuscripts - Matenadaran, in the Museum of Literature and Art Towards 100th Anniversary of its First Republic the National Library of Armenia has initiated digitization of periodicals of the First Republic, and the digital surrogates are available from the database <http://tert.nla.am>.


ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՈՒՆԵ

*Խ. Աբովյանի անվան
հայկական պեղական մանկավարժական համալսարանի
Թանգարանագիտության, գրադարանագիտության
և մատենագիտության ամբիոն*

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Ավետիք Իսահակյան, անձնական գրադարան, գիրք, գրադարանի հավաքածու, քարտային գրացուցակ:

Key words. Avetiq Isahakyan, personal library, book, book collection, card catalogue.



Հայ գրականության պատմության մեջ քչերին է վիճակվել այնպիսի մեծ կյանք, ինչպիսին վիճակվեց Ավետիք Իսահակյանին: 1875 թ. հոկտեմբերի 30 և 1957 թ. հոկտեմբերի 17 – Ավետիք Իսահակյանի ծննդյան և մահվան այս տարեթվերի միջև ընկած է 82 տարի, որ ամփոփում է հիրավի բազմաբովանդակ կյանք, պատկառելի ոչ

միայն ժամանակային ընդգրկմամբ, այլև ներքին վիթխարի և խորապես դրամատիկական բովանդակությամբ:¹ Ավետիք Իսահակյանը կամարել է հայ գրականության երկու փառահեղ շրջաններ՝ 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի առաջին կեսը: Իր գոյությամբ և իր ստեղծածով նշանավորել է բուն հայկականը, դարձել ազգի խորհրդանիշ, համաժողովրդական հեղինակություն, որն արտահայտվել է մեկ բառով՝ Վարպետ:²

1945 թ. Վարպետի ծննդյան 70-ամյակի առթիվ, Հայաստանի կառավարությունը մեծ գրողին առանձնատուն նվիրելու որոշում է կայացնում:

¹ Հայկական Լևոն, Վարպետը, Երևան: 1990.- էջ 5:

² Իսահակյան Ավիկ, Բարն, Վարպետ, Երևան: 2008.- էջ 16:



Այստեղ Ավետիք Իսահակյանը ապրում է կյանքի վերջին տասը տարին: Ներկայումս Վարպետի առանձնատունը գործում է որպես մեծանուն բանաստեղծի տուն-թանգարան:

Տուն-թանգարանի հպարտությունն է բանաստեղծի անձնական գրադարանը: Գիրքը միշտ գնահատված է եղել Իսահակյանների տոհմում, սակայն բոլոր զավակներից առավել գրքասիրությամբ աչքի է ընկել Ավետիքը. գիրքը անբաժան է եղել ապագա բանաստեղծից: Ի տարբերություն մյուս գրքասերի՝ Հովհաննես Թումանյանի, որի կյանքը հիմնականում անցել է մեկ քաղաքում՝ Թիֆլիսում, և նրան հաջողվել է անխափան ու անկործան իր գրադարանը հավաքել. Ավետիք Իսահակյանի կյանքը մեծ պանդուխտի, թափառական ողմանտիկի դասական օրինակ է, և նրա գրադարանն էլ իր կյանքի յուրահատուկ հայելին է:³

Ավետիք Իսահակյանի անձնական գրադարանի հավաքածուն յուրօրինակ լակմուս է, որը արտացոլում է գրողի, մարդու էությունը, լրացուցիչ, բայց շատ կարևոր բացահայտումներ է անում նրա մասին: Գրադարանը հսկայական հետաքրքրություն է ներկայացնում, հրաշալի պատկերացում է տալիս բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության, մտաշխարհի, նրա հոգևոր հետաքրքրությունների վերաբերյալ:

³ Իսահակյան Ավիկ: Ավետիք Իսահակյանը և գիրքը: Հայ գիրքը և հայ գրականությունը.- Ե., 2013.- էջ 104:



Վարպետի անձնական գրադարանում պահպանվել է 5.000 միավոր գիրք: Գրքերի մեծ մասը հայերեն են՝ 2.000 միավոր, ռուսերեն՝ 1.500 միավոր, մյուս մասն էլ օտար լեզուներով գրքերն են: Գրադարանի հավաքածուում ներառված են բոլոր այն արժեքավոր գրքերը, որոնք հետաքրքրել են բանաստեղծին: Այստեղ հավաքված են գրողի երկերի հնարավոր բոլոր հրատարակությունները, ինչպես և աշխատությունները նրա ստեղծագործությունների վերաբերյալ: Հաշվի առնելով անձնական գրադարանի գրքերի բովանդակային բազմազանությունը, կարելի է պատկերացնել գրողի ոչ միայն նախասիրությունները, այլև հասկանալ նրա աշխարհընկալման և, իբրև ստեղծագործող, նրա գեղարվեստական մտածողության առանձնահատկությունները:

Գրադարանի գրքերը ժամանակին Ավետիք Իսահակյանի կողմից խմբագրվել, դասավորվել են ըստ բովանդակության, սակայն Վարպետի մահից հետո հավաքածուն մի քանի անգամ վերադասավորվել է թանգարանի աշխատակիցների ջանքերով: Այժմ գրքային ամբողջ հավաքածուն գետեղված է վեց պահարաններում, որոնցից հինգը գտնվում են աշխատասենյակում, իսկ մի պահարանն էլ Վարպետի ննջարանում: Պահարաններում գրքերի դասավորությունը ըստ լեզուների և բովանդակության է: Գրադարանի գրքերի ստվար մի մաս ներկայացված է թանգարանի ընդհանուր ցուցադրությունում, իսկ Ավետիք Իսահակյանի ձեռագրերը պահպանվում են թանգարանի ֆոնդերում: Գրադարանի առաջին քարտային գրացուցակը կազմել են թանգարանի աշխատակիցները: Թղթի քառակուսի թերթիկների վրա տրվել են գրքի մատենագիտական

տվյալները: Գրադարանի յուրաքանչյուր գիրք գրանցված է թանգարանի գրքամատյաններում, որտեղ մատենագիտական տվյալներից բացի, նշվում է նաև գրքի պահպանվածության աստիճանը, էջերի կտրտված լինել կամ չլինելը, որը Ավետիք Իսահակյանի կողմից գիրքն օգտագործված լինելու ապացույցներից է:

Գրադարանում՝ և՛ հայերեն, և՛ օտար լեզվով հավաքածուներում գերակշռում է գեղարվեստական գրականությունը: Քիչ չեն նաև գիտական, փիլիսոփայական, բնագիտական, կրոնական, աստվածաբանական և գիտության այլ բնագավառներին վերաբերող գրքերը:

Ավետիք Իսահակյանը հատկապես սիրել է բառարաններ ընթերցել. դա կարծես ներքին անհրաժեշտություն է եղել: Օտար լեզուների բառարանների օգնությամբ հղկել-բարելավել է իր իմացած օտար լեզուները: Տասից ավելի միայն հայ-գերմաներեն և գերմաներեն-հայերեն բառարաններ կան իր հավաքածուում: Նույնը կարող ենք ասել ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն լեզուների բառարանների վերաբերյալ:⁴


Անձնական գրադարանի հավաքածուն բազմազան է ոչ միայն թեմատիկ, այլև լեզուների առումով: Ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն գրքերի կողքին հավաքածուում տեղ են գտել ևս տասնյոթ օտար լեզուներով գրքեր: Այդ գրքերը ոչ միայն օտար հեղինակների գրքեր են, այլև հայ հեղինակների ստեղծագործությունների թարգմանություններ, ինչպիսիք են՝ ադրբեջաներեն թարգմանված Խաչատուր Աբովյանի «Բանաստեղծություններ և պատմվածքներ», չինարեն թարգմանված «Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները և հոդվածներ Ավետիք Իսահակյանի և Խաչատուր Աբովյանի մասին», վրացերեն թարգմանված «Սասունցի Դավիթ» և շատ այլ գրքեր:

Գրադարանը մեծ արժեք է ներկայացնում այն առումով, որ Ավետիք Իսահակյանը իր կարդացած գրքերի վրա իր ձեռքով կատարել է բազմաթիվ մակագրություններ՝ ընդգծումներ, նշումներ: Հարյուրավոր գրքերի տողերի արանքներում, առանձին բառերի, հատվածների մոտ Ավետիք Իսահակյանի արած բազմաթիվ նշումները, գծանշանները, մատիտանշանները առանձնահատուկ նշանակություն են տալիս Վարպետի գրադարանին:

Վարպետի անձնական գրադարանի հայերեն հավաքածուն ուսումնասիրության ենթարկելով պարզ դարձավ, որ, թերևս, ամենահին թվագրվող գիրքը 1852 թ. Մոսկվայում Գևորգ Ախվերդյանի ջանքերի շնորհիվ լույս տեսած Սայաթ-Նովայի «Գուսանք» գիրքն է:

⁴ Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյանը և գիրքը, Հայ գիրքը և հայ գրականությունը, Երևան: 2013.-էջ 108:

Հայերեն հավաքածուի մեջ կարևոր արժեք է ներկայացնում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» գիրքը, որը լույս է տեսել Երևանում 1939 թ.: Ինչպես նշում է գրքի խմբագիր Ռուբեն Զարյանը, սույնը գրքի խորհրդային առաջին հրատարակությունն է: Գրքի այս հրատարակությունը ճշտված է ձեռագրի հետ և ձեռագրի հիման վրա լրացվել են գրաքննական բացթողումները, հետևապես մինչև այժմ եղած հրատարակությունների մեջ այս հրատարակությունը հանդիսանում է առաջին լրիվ ու ամբողջական հրատարակությունը:



Ավետիք Իսահակյանը իր կյանքի ընթացքում շատ երկրներով է ճանապարհորդել, եղել է բազմաթիվ վայրերում, դրա վկայությունը նրա գրադարանի հավաքածուի տարբեր վայրերում լույս տեսած հրատարակություններն են, որոնց մեծ մասը բանաստեղծը հավաքել է իր ուղևորությունների ընթացքում: Ծանոթանալով հայերեն գրքերին՝ պարզ դարձավ, որ գրքերի զգալի մասը լույս են տեսել Փարիզում, Զմյուռնիայում, Դոնի Ռոստովում, Նյու Յորքում, Մոսկվայում, Ֆլորենցիայում, Թիֆլիսում, Կ.Պոլսում: Հավաքածուում մեծ թիվ են կազմում Վենետիկում՝ Մխիթարյան միաբանությունում լույս տեսած հրատարակությունները, որովհետև մինչ Վենետիկում հաստատվելը Ավետիք Իսահակյանը նպատակամղված սկսել էր հավաքել Մխիթարյան միաբանության հրատարակած գրքերը:

Ավետիք Իսահակյանի անձնական գրադարանում պահպանվող գրականության մեջ ուրույն արժեք են ներկայացնում այն գրքերը, որոնք տարբեր հեղինակների կողմից նվիրվել են Ավետիք Իսահակյանին՝ ջերմ, բարեկամական, սիրալիր ձոներով: Դրանք վկայում են Ավետիք Իսահակյանի՝ որպես գրող, անհատ, ընկեր ճանաչված ու սիրված լինելը: Ավետիք Իսահակյանին գրքեր նվիրել են անվանի գրողներ, լեզվաբաններ, գրականագետներ, հրատարակիչներ, թարգմանիչներ և այլ անձիք:

Այդպիսի գրքերից ներկայացնենք Լևոն Խաչիկյանի «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» գիրքը, որը ընծայագրված է՝ «Ամենայն Հայոց վարպետին, ամենաջերմ սիրով և խորին ակնածանքով Լ. Խաչիկյանից, 10 հունիս 55 թ.» կամ Գուրգեն Մահարու «Տիտանիկ» գիրքը ընծայագրված՝ «Սիրելի Ավ. Իսահակյանին վերադարձող Աբու-Լալա-Մահարուն Գուրգեն Մահարուց» և այլն:

Գրքերից բացի Ավետիք Իսահակյանը հավաքել է տարբեր տարեթվերի «Օրացույցներ», «Արձանագրություններ», «Զեկույցներ»: Գրադարանում պահպանվում են նաև պարբերական մամուլների, գրական հանդեսների, ամսագրերի տարբեր թվականների հրատարակություններ: Անհրաժեշտ է նշել, որ Ավետիք Իսահակյանի անձնական գրադարանում պահպանվում են այնպիսի գրքեր, հրատարակություններ, որոնք բացակայում են հայաստանյան խոշոր գրադարաններում:

Ավետիք Իսահակյանի անձնական գրադարանի հավաքածուն դեռ հասանելի չէ հանրությանը: Գրադարանից օգտվելու հնարավորություն են ստանում այն անձինք, ովքեր հետազոտություններ, ուսումնասիրություններ են կատարում Ավետիք Իսահակյանի վերաբերյալ: Այժմ թանգարանի աշխատակիցների ջանքերով կազմվում են գրադարանի ամբողջ գրքային հավաքածուի մատենագիտական ցանկերը, իսկ մոտապագայում իրականություն կդառնա գրադարանի թվայնացման գործընթացը:

SUMMARY

The book has been a sacred object for Avetiq Isahakyan and the personal library of that writer appears to be the real proof of it. Avetiq Isahakyan's private library is the specific mirror of his life, which reflects the writer's nature, his interests and preferences. The library is the perceptible part of Varpet's rich heritage, which must be kept and transmitted to the next generations.

ՄՈՍԿՎԱՅԻ ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բանալի բառեր՝ Լազարյան ճեմարանի, գրադարան, հայոց պատմություն, ազգային հավաքածու:

Keywords. Lazarian Seminary, Library, Armenian History, National Collection.



Լազարյան ճեմարանն ուսումնական հաստատություն էր, հայագիտական և արևելագիտական խոշոր կենտրոն: Մեծարվել է «Մայր դպրանոց», «Սերմնացան հայոց դպրոցաց» և այլ պատվանուններով:

Հայ ժողովրդի ճակատագիրն այնպես է դասավորվել, որ իրենց հայրենիքի սահմաններից շատ հեռու հայերը ստեղծել են ազգային մշակույթի օջախներ՝ հասարակական մտքի, կրթության, գիտության, արվեստի, գրատպության կենտրոններ: Այդ կենտրոններից յուրաքանչյուրն աչքի է ընկել իր ինքնատիպությամբ և իր

դրական դերն է ունեցել հայ ժողովրդի պատմամշակութային կենսակերպի կերտման գործում:

Լազարյանների ընտանիքը (հայրը՝ Աղազար Նազարի Լազարյան, մայրը՝ Աննա Հովակիմովնա, որդիները՝ Հովհաննես, Մինաս, Խաչատուր, Հովակիմ և դուստրը՝ Աննա) Ռուսաստան էին տեղափոխվել Իրանից և 18-րդ դարի կեսերին հաստատվել Մոսկվայում և Պետերբուրգում: Սկզբում հիմնադրել են մետաքսի մանուֆակտուրա, ապա 70-ական թվականներին իրենց հետաքրքրությունն ուղղելով լեռնարդյունաբերության ոլորտը՝ դարձան լեռնարդյունաբերական ձեռնարկությունների խոշորագույն տերեր:



Լազարյանները թղթակիցներ ունենալով Մերձավոր և Միջին Արևելքի, ինչպես նաև Եվրոպայի շատ երկրներում, լավ էին կողմնորոշվում միջազգային քաղաքական իրադրության մեջ, կապ էին պահպանում վրացական թագավորական տան և Հնդկաստանի ազդեցիկ հայերի հետ: Հովհաննես արքեպիսկոպոս Արղությանի հետ Հովհաննես Լազարյանը մասնակցել է Ռուսաստանի հովանուներքո հայկական պետության վերականգնման նախագծերի նախապատրաստմանը:

Հովհաննես Աղազարի Լազարյանը լավ էր հասկանում կրթության նշանակությունը և՛ ազգային-ազատագրական շարժման համար, և՛ հայկական գաղութների կյանքում: Լազարյաններն իրենց շատ կալվածքներում կառուցել են դպրոցներ և ճարտարապետական առումով գեղեցիկ եկեղեցիներ:

Չնայած որ ցարական Ռուսաստանի պաշտոնական շրջանները ոչ միայն չէին օգնում, այլ, ավելի շուտ, խոչընդոտում էին հայկական ուսումնական հաստատությունների ստեղծմանը, բայց և այնպես երկրի տարբեր քաղաքներում՝ Մոսկվայում, Նոր Նախիջևանում, Աստրախանում, Թիֆլիսում հիմնադրվեցին հայկական ուսումնարաններ, տպարաններ: Այդ ուսումնական հաստատությունները մասնավոր էին, ստեղծված բարեգործական միջոցներով և ոչ մի աջակցություն չէին ստանում կառավարության կողմից:

Հայկական առաջին տպարանը Ռուսաստանում հիմնվեց Գրիգոր Խալաբյանի կողմից: Խալաբյանները Լազարյանների նման հայտնի ընտանիք էին և նրանց արմատները գալիս էին Նոր Զուղայից: Այս տպարանում լույս տեսան հայ

ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող գրքեր, ինչպիսիք էին Հովսեփ Արղությանի խորհրդով տպագրված «Այբբենարան»-ը, «Ժամագիրք»-ը, Ներսես Շնորհալու «Յիսուս որդին», «Աստուածադերս»-ը , «Գիրք որ կոչի ընդհանրական»-ը, մի շարք բառարաններ և այլ կրոնական և աշխարհիկ բովանդակություն ունեցող գրքեր:




ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Պետերբուրգ: Տպ. Գրիգոր Խալիլարյանցի, 1781, 32 էջ:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Պետերբուրգ: Տպ. Գրիգոր Խալիլարյանցի, 1788, 336 էջ:



ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ


Պետերբուրգ: Տպ. Գրիգոր Խալիլարյանցի, 1785, 438 էջ:



ՂԱԶԱՐ ԶԱՀԿԷՏԻ

ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ

Պետերբուրգ: Տպ. Գրիգոր Խալիպարյանցի, 1786, 279 էջ:



Սկզբում տպարանը տեղավորված էր Պետերբուրգում, Հովհաննես Լազարյանի տանը: Տպարանի գործունեությանը օժանդակելու նպատակով Հովսեփ Արղությանը Կոստանդնուպոլսից հրավիրում է Թադեոս վարդապետ Մարուգյանին, որը համարվում էր «քաջ հայկաբան»:

1788 թ. Արղությանը դիմում է Պետերբուրգի և Մոսկվայի բարձրապատիվ աստիճանավորներին, որպեսզի օժանդակեն Խալիպարյանի մահից հետո տպարանի վրա ծանրացած պարտքերը վճարելուն և տպարանը Նոր Նախիջևան փոխադրելուն:

Նոր Նախիջևան փոխադրվելուց հետո Խալիպարյանի տպարանը վերանվանվեց «Տպարան նորին բարձր սրբազնության», որտեղ լույս տեսան Ալեքսանդր Զուլայեցի կաթողիկոսի՝ «Գիրք որ կոչի Աղօթամատույց»-ը Սիմեոն Երևանցու «Գիրք աղօթից, որ կոչի զբոսարան հոգևոր», Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից որ կոչի Աստուածադերս» և այլ արժեքավոր գրքեր: Միևնույն ժամանակ աշխատանք էր կատարվում ռուսական շրջաններին հայկական իրականության հետ ծանոթացնելու համար:

Նշանակալից պետք է համարել Հովհաննես Լազարյանի և Հովսեփ Արղությանի նախաձեռնությամբ ու Վառլան Վահլամովի թարգմանությամբ ռուսերեն լեզվով «Յորդորակի» հրատարակումը 1786 թ.: Դա այն գիրքն էր, որը ժամանակին դատապարտվել էր այրման Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հրամանով:

Տպարանում լույս տեսան այնպիսի գրքեր, որոնք մեծ նշանակություն ունեին հայ ժողովրդի բախտի համար: Միևնույն ժամանակ այդ գրքերը կրում էին նոր գաղափարներ, նոր մտքեր: Հենց այս առավելությունն էր պատճառ

հանդիսանում, որպեսզի Հովակիմ Լազարյանը ցանկություն հայտնի տպարանը Մոսկվա տեղափոխել և այնտեղ ուսումնարան հիմնել:


831. Հենչել, Բանավոր և գրավոր հաշվելու խնդիրներ ծխական դպրոցների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 105 էջ:

832. Ղազարյան Յ. Թասիբ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 88 էջ:

833. Մելիք-Բախտամյան Յ. Տիկին և խոհանոց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 308 էջ:

834. Հովհաննիսյան Ա. Հայ ազգի կատաղի թշնամին.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 31 էջ:

835. Հովհաննիսյան Ա. Ռուս-հայերեն բառգիրք: Հտ. 2.- Թիֆլիս: 1889.- 667 էջ:

836. Նազարյան Յ. Օրացույց 1890 թվականին Քրիստոսի և Հայկա ՏՅՁԲ-4382 թ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 255 էջ:

837. Նազարյան Հ. Ընտիր հատվածներ: Մաս Ա.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 504 էջ:

838. Նազարյան Հ. Հայոց լեզվի ուսուցիչ: II տարվա դասագիրք.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 144 էջ:

839. Նազարյան Տ. Ղալի աղաթներուն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 43 էջ:

840. Նավասարդյան Տ. Հայ-ժողովրդական հեքիաթներ: 5-րդ գիրք.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 144 էջ:

841. Շահազիզյան Ս. Հայկական նշանագրեր.- Թիֆլիս: Վիմագր. Կ. Մեսխիսի, 1889.- 4 էջ:

842. Շահնազարյան Շ. «Ծաղիկ ժամանակի» երգերը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 80 էջ:

843. Շեկսալիբ Վ. Համլետ.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1889.- 125 էջ:

844. Չմշկյան Ս. Օրացույց 1890 թվականին Քրիստոսի ըստ Հայոց բուն տոմարի 4382 թ. և եկեղեցական տոմարի 1339 թ.: 3-րդ տարի.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1889.- 128 էջ:

845. Չմշկյան Ս. Հագներգ ի սգալի մահ անգուգական բարերարին իր կոմս Միքայել Տարիելյան Լորիս Մելիքյանց 7-ն հունվարի 1889 ամի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 13 էջ:

846. Պոռշյան Պ. Ցեցեր.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1889.- 336 էջ:

847. Սահակյան Ս. Սրբազան պատմություն Նոր ուխտի: Հտ. Բ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 118 էջ:

848. Սիմոնյան Պ. Սրբազան պատմություն Հին կտակարանի հայոց ուսումնարանների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 211 էջ:

849. Սոկրատես. Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 70 էջ:

850. Սուրբ լեզու. Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1889.- 19 էջ:

851. Տեր-Գրիգորյան Գ. Գասպարյան, Մանուկների մարտողության գործարանների մի քանի հիվանդությունները.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1889.- 15 էջ:

852. Տեր-Ղևոնդյան Ն. Մայրենի լեզու: Երկրորդ տարի: Երկրորդ գիրք ընթերցանության մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 141 էջ:

853. Փանյան Թ. Մելիք.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 88 էջ:

854. Փափազյան Վ. Ենիչերի.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1889.- 32 էջ:

855. Օրացույց 1890 թվականին Քրիստոսի Հայկյան ՏՅԶԲ-4382 թվականին և տոմարական թվականի Ազգիս ՌՅԼԹ-1339 պատկերազարդ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 71 էջ:

856. Ֆրդուսի, Արևելյան վիպաշխարհ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1889.- 47 էջ:

857. Ագապյան Ա. Մուսիկի գանգատը.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 32 էջ:

858. Աղայան Ղ. Բանաստեղծություններ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 156, 55 էջ:

859. Աղանյանց Գ. Կրոնի դասագիրք 3-րդ տարվա ուսումն. հայոց եկեղեցական-ծխական ուսումն. համար.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 58 էջ:

860. Աղանյանց Գ. Օրացույց 1891 թվականին Քրիստոսի Հայկական ՏՅԶԳ-4383 և տոմարական թվականին Ազգիս ՌՅԽ-1340.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 96 էջ:

861. Առաքելյան Հ. Աղա Մուհամմեդ շահը Շուշում.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 30 էջ:

862. Ավշարյան Ե. Զրույց.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 32 էջ:

863. Արծրունի Գ. Այնտեղ և այստեղ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 56 էջ:

864. Գանիեր Լ. Հայրենասեր տիկին.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 24 էջ:

865. Գարշին Վ. Ազդանշան.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 24 էջ:

866. Երիցյան Ա. Գրիգոր Արծրունու և նրա քսանը հինգ տարվա գրական գործունեության առիթով.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 100 էջ:

867. Ինախի, Կարենի սրինգը.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 87 էջ:

868. Ինչպես պահպանվել խոլերայից.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 23 էջ:

869. Լեռ, Արնագին.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Ս. Նազարյանի, 1890.- 48 էջ:

870. Լուսնկիչ Վ. Պատիկ է, բայց չստիկ է.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 46 էջ:

871. Լուսնյակ գիշեր և հայկական երգեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 16 էջ:

872. Խաչակիր մանուկներ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 64 էջ:

873. Կամպիոն Ա. Բասկական լեգենդա.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 14 էջ:

874. Ղազարյան Հ. Գյուլե.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 60 էջ:

875. Ղարազյոզյան Հ. Սև-լեռնցիք.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 31 էջ:

876. Սադաթյան Վ. Կըռք-կըռք.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 48 էջ:

877. Մալումյան Խ. Մտքի մշակը.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 96 էջ:

878. Մելիք-Շահնազարյան Կ. Ուղեցույց գործնական շերամապահության.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 93 էջ:

879. Մելիք-Շահնազարյան Ս. Հայ գյուղացու սև օրը.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 157 էջ:

880. Նամայյան Ա. Հարևաններ.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 21 էջ:

881. Նավասարդյան Տ. Հայ ժողովրդական հեքիաթներ.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 150 էջ:

882. Նար-Դոս, Աննա Սարոյեան.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 76 էջ:

883. Շիլլեր Ֆ. Ավագակներ.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 194 էջ:

884. Շիրվանզադե, Զուր հույսեր.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 435 էջ:

885. Շիրվանզադե, Տասնուհինգ տարի անցած.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 36 էջ:

886. Շմիդտ Օ. Գալիա.- Թիֆլիս: Տպարան Արոր, Ս. Նազարյանի, 1890.- 36 էջ:

887. Չմշկյան Մ. Ծոցի օրացույց 1891 թվականին Քրիստոսի.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 96 էջ:

888. Պալասանյան Ս. Պատմություն հայոց.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 496 էջ:

889. Պատկերագարդ օրացույց 1891 թվականին Քրիստոսի Հայկյան ՏՅՁԳ (4383) թվականին և տոմարական թվականին Ազգիս ՌՅԽ-1340.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 88 էջ:

890. Պոռշյան Պ. Բղդե.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 360 էջ:

891. Զիվանի [Աշուղ], Չոքս երգ.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 8 էջ:

892. Զորջ Ստեֆենսոն.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 214 էջ:

893. Սազայի [Աշուղ], Ամրահ և Սավլի.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 46 էջ:

894. Սահակյան Ս. Դասագիրք կրոնի.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 195 էջ:

895. Սարգսյան Լ. Այց Թյուրքաց Հայաստանին.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 285 էջ:

896. Սարգսյանց Ա. Բանալի կամ բացատրություններ «Զվարճալի ժամերի».- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 32 էջ:

897. Սարգսյանց Ա. Զվարճալի ժամեր.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 96 էջ:

898. Սմայլս Ս. Ինքնօգնություն.- Թիֆլիս: Տպարան Հովհաննես Մարտիրոսյանցի, 1890.- 592 էջ:

899. Տաքության և օղի մասին.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 46 էջ:

900. Տեր-Գրիգորյան Գ. Խոլերա և նրա առաջն առնելու միջոցներ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 32 էջ:

901. Տեր-Ղևոնդյան Գ. Օրիորդ Նադիկ Կիլիկիան.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 71 էջ:

902. Տեր-Ղևոնդյան Ն. Մայրենի լեզու: Առաջին տարի: Այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 95 էջ:

903. Տեր-Ղևոնդյան Ն. Մայրենի լեզու: Դասագիրք ընթերցանութ. ազգ. ուսումնարանների համար: 4-րդ գիրք.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 308 էջ:

904. Տեր-Ստեփանյան Ա. Սկզբունք քրիստոնեական ուղղափառ հավատո Հայաստանյայց եկեղեցվո.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 208 էջ:

905. Րաֆֆի, Դավիթ Բեկ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 763 էջ:

906. Րաֆֆի, Կայծեր.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 49 էջ:

907. Րաֆֆի, Հայ կինը և հայ երիտասարդությունը.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 222 էջ:

908. Րաֆֆի, Մինը այսպես, մյուսը այնպես.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 96 էջ:

909. Փափազյան Վ. Թոփալ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 44 էջ:

910. Փափազյան Վ. Լալո.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 28 էջ:

911. Փափազյան Վ. Խաթ-սաբա.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 89 էջ:

912. Փափազյան Վ. Պարսկական զրույցներ.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 37 էջ:

913. Քերական կամ այբբենարան հարմարյալ ի վաղ ժամանակաց.- Թիֆլիս: Տպարան Մարկիանոս Դ. Ռոտինյանցի, 1890.- 32 էջ:

914. Քերական կամ այբբենարան հարմարյալ ի վաղ ժամանակաց.- Թիֆլիս: Տպարան Մովսես Վարդանյանի, 1890.- 32 էջ:

915. Օրացույց կանանց համար 1891 թվականին Քրիստոսի Հայկյան ՏՅՁԴ (4383) թվականին տոմարական թվակ. Ազգիս ՌՅԽ-1340.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 63 էջ:

916. Օրացույց 1891 թվականին Քրիստոսի և Հայոց 3998-3999 և տոմարական թվականին ՌՅԽ-1340.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 96 էջ:

917. Օրբելի Հ. Նախաշավիղ կրոնագիտության ըստ ուղղափառ դավանության Հայաստանյայց Սուրբ եկեղեցվո: Մասն 1.- Թիֆլիս: Տպարան Արոթ, Տ. Նազարյանի, 1890.- 37 էջ:

Շարունակելի...
Կազմող՝ Արմինե Դավթյան

*ՄԵ ՍՐՈՊԹԱՆ ՍՈՆԱ
ԽՆԼՈ Ապրիլ անվան
ազգային մանկական գրադարան*

ԿԱՅՔՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Բանալի բառեր՝ Մանկական գրադարան, գրադարանի կայքէջ, սոցիալական ցանցեր, տեղեկատվական միջոցներ, հանրային կապեր:

Keywords. Children's library, library website, social networks, information resources, public relations.

Ժամանակակից աշխարհում ոչ մի կազմակերպություն չի կարող գործել առանց համացանցի, քանի որ Վեբ2 տեխնոլոգիաները համացանցը դարձրել են ոչ միայն տեղեկատվության պահոց, այլ նաև հաղորդակցության հարթակ, որի միջոցով կարելի է փոխադարձ կապ հաստատել հանրության հետ: Մեր օրերում գրադարանի արդյունավետ գործունեությունը կապված է տեղեկատվական հասարակության զարգացման հետ, որն էլ արդյունք է մեր կենցաղում համացանցի ու տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և դրանց արագ զարգացման: Իսկ տեղեկատվական հասարակության առանցքային սկզբունքներից է տեղեկատվության համընդհանուր հասանելիությունը: Այդ սկզբունքին հասնելու ամենաարագ և ամենաարդյունավետ միջոցներից են կայքերը և սոցիալական մեդիաները, որոնց միջոցով տարատեսակ կազմակերպություններն ու հաստատությունները հանրությանն են տրամադրում իրենց տեղեկատվական պաշարները: Այդ իսկ պատճառով սեփական կայք ունենալը կարճ ժամանակահատվածում կազմակերպության ճանաչելիությունն ու հաջողությունն ապահովելու, ինչպես նաև շարունակ իրեն կամ իր ապրանքներն ու ծառայությունները անվճար գովազդելու միջոց է:

Կայքը կարևոր նշանակություն ունի նաև գրադարանի գործունեության, ծառայությունները գովազդելու և վարկանիշի համար: Ներկայումս այն գրադարանը, որը կայք չունի, կտրված է համաշխարհային տեղեկատվական ցանցից և չի կարող լիարժեք տեղեկատվության փոխանցում իրականացնել և մրցակցել այլ գրադարանների հետ: Իսկ տեղեկատվությունը գրադարանի կայքի գլխավոր գործառույթն է: Գրադարանի կայքը ընթերցողներին հնարավորություն է տալիս

առանց գրադարան այցելելու տեղեկանալ գրադարանի ռեսուրսների ու ծառայությունների մասին:

Կայքի միջոցով գրադարանները ձգտում են գրավել հնարավոր ընթերցողների ուշադրությունն իրենց առաջարկած ծառայությունների վրա և հանրության գիտակցության մեջ ձևավորել գրադարանի դրական կերպարը՝ որպես հետաքրքիր, ակտիվ մշակութային կենտրոն:

Գրադարանի կայքի հիմնական նպատակներից են՝

- ընթերցողներին տեղեկացնել գրադարանի գործունեության մասին,
- ապահովել ընթերցողների անխափան և լիարժեք հասանելիություն տեղեկատվությանը
- զարգացնել տեղեկատվական ծառայությունները,
- բավարարել ընթերցողների տեղեկատվական պահանջմունքները,
- բարձրացնել գրադարանի հեղինակությունը,
- ձևավորել գրադարանի դրական կերպարը՝ որպես տեղեկատվական ու սոցիալ-մշակութային կենտրոն և այլն

Գրադարանային կայքէջերը 4 տեսակ են .

1. *Ինֆերնետ այցեքարտ* - նման կայքը, որպես կանոն ներառում է կարճ տեղեկություններ գրադարանի մասին. օր հասցե, տեղեկություններ գրադարանի մասին, կոնտակտային տվյալներ:

2. *Թեթև տիպի* – Բացի վերը նշվածից, այս տիպի կայքերում կան մանրամասն տեղեկություններ գրադարանային ֆոնդի, առաջարկած ծառայությունների, իրականացվող միջոցառումների և իրականացված նախագծերի մասին:

3. *Սրանդարտ* - սա լիարժեք կայք է, որում, բացի վերը թվարկած երկուսի ֆունկցիաներից ունի նավարկության համակարգ և մուտք էլեկտրոնային քարտարան և տվյալների շտեմարաններ:

4 . *Հավաքական* կարգի կայք: Այս դեպքում հաճախորդը կարող է հեռահար ձևով մուտք գործել գրադարանի տվյալների շտեմարաններ և ստանալ իրեն, իսկ անհրաժեշտ տեղեկատվությունը:

Կայքը ստեղծված է օգտագործողների/ընթերցողների համար, այդ իսկ պատճառով այն պետք է հետաքրքիր և օգտակար լինի, նախ և առաջ նրանց համար: Կայքի համար կան չափանիշներ, որոնցով էլ կարելի է գնահատել կայքը:

Գրադարանի կայքի հիմնական չափանիշներն են.

- բովանդակության խորությունը.

- նավարկման պարզությունը.
- տեղեկատվական պաշարների կայունությունը.
- տեղեկատվության թարմացման արագությունը.
- հասանելիությունը.
- կայքի արտաքին ձևավորումը¹:

Համացանցի ակտիվորեն զարգացող միջավայրից են սոցիալական մեդիաները, որոնք այսօր օգտատերերի հաղորդակցման գլխավոր հարթակն են: Սոցիալական մեդիաները գրադարանների համար իրենց տեղեկատվական պաշարներն ու ծառայությունները գովազդելու և դրական կերպարը ձևավորելու ևս մեկ միջոց են: Գրադարաններն այստեղ կարող են տեղադրել հայտարարություններ՝ իրենց ծառայությունների ու միջոցառումների մասին, իրազեկել դրանց մասին և հրավիրել բոլորին գրադարան: Սոցիալական մեդիաներում օգտվողներն ակտիվորեն և ավելի ազատ են կիսվում իրենց մտքերով ու տպավորություններով, այստեղ տեղի են ունենում քննարկումներ: Դա կարող է օգնել ընթերցողների կարծիքը գրադարանի այս կամ այն ծառայության մասին պարզելու և խնդիրները բացահայտելու գործընթացում:

Սոցիալական մեդիաները՝

- փոքրացնում են աշխարհագրական հեռավորությունների նշանակությունը,
- թույլ են տալիս բավականաչափ մեծացնել կապերի թիվն ու ակտիվացնել հաղորդակցությունը,
- նպաստում են կոմունիկացիոն ինտերակտիվության հնարավորությունները լիովին օգտագործելուն,
- թույլ են տալիս հաստատել կապեր, որոնք մինչև վերջին ժամանակներս մասամբ հնարավոր չէին կամ բոլորովին այլ որակի և մակարդակի էին,
- ինչպես նաև թույլ են տալիս մի քանի անգամ մեծացնել կոմունիկացիաների արագությունը²:

Սոցիալական մեդիաները ներառում են

- սոցիալական ցանցերը.
- բլոգերը.
- հարթակները և այլն:

¹ <http://textbook.vadimstepanov.ru/chapter5/glava5-1.html>

² http://www.y su.am/files/02N_Melkonyan-1450428462-.pdf

Տեղեկատվության և սոցիալական մեդիաների ընդհանուր համատեքստում ներկայացնենք Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի կայքն³ ու սոցիալական ցանցի էջերը և պարզենք՝ արդյոք ծառայում է այն իր նպատակին, բավարարում է ընթերցողների տեղեկատվական պահանջները, նպաստում է գրադարանի աշխատանքների հանրայնացմանը:

Գրադարանի կայքը գործում է 2014 թվականից: Կայքը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն: Այն, անշուշտ ներառում է բոլոր կայքերին հատուկ ընդհանուր բաժիններ.

- նորությունները (գրադարանում տեղի ունեցող տեղի ունեցած իրադարձությունների ամփոփումները)
- գրադարանի մասին ընդհանուր տեղեկությունը (բաժինները, առաջարկած ծառայություններ, գրադարանից օգտվելու կանոններ, աշխատաժամեր, գրադարանի պատմությունը և այլն)
- հասցե(ներառում է նաև քարտեզ)
- էլ. հասցե
- համագործակցություն(ներկայացնում է այն կազմակերպությունները և նրանց էլ հասցեները, որոնց հետ գրադարանը համագործակցում է),
- աջակցություն :

Բացի սրանից կայքն ունի նաև հետևյալ բաժինները.

Համահավաք գրացուցակ՝ <http://armunicat.nla.am/>: Հայաստանյան գրադարանների հավաքածուների էլեկտրոնային գրացուցակը, որը ներառում է Հայաստանի գրադարանների հավաքածուների ցանկը. այն հայաստանյան գրադարանային հավաքածուների մատենագիտական տեղեկատու աղբյուր է :

Հոգեբանի անկյուն՝ Ներկայացնում է գրադարանի ծառայություններից մեկը, իրականացնում է հոգեբանական խորհրդատվական, հետազոտական գործունեություն երեխաների և ծնողների, մանկական ընթերցանությունը կազմակերպողների՝ գրադարանավարների և մանկավարժների համար:

Նորություններ՝ Այս բաժնում կարելի է ծանոթանալ գրադարանում տեղի ունեցած միջոցառումներին և իրադարձություններին: Յուրաքանչյուր միջոցառում և իրադարձություն ունի իր համառոտ նկարագրությունը տվյալ միջոցառման ու նրա նպատակի վերաբերյալ, ինչպես նաև ֆոտոշարքը:

Ծրագրեր՝ տեղեկացնում է գրադարանի իրականացրած ծրագրերը, որոնք ներկայացված են առանձին վերնագրերով:

³ <http://www.natchildlib.org/hy>

Գրադարան TV՝ Այս բաժնում տեղակայված են գրադարանում տեղի ունեցած միջոցառումների ու տարատեսակ իրադարձությունների տեսանյութերը, որոնք տեղակայված են գրադարանի youtube-յան էջում:

Ֆոտոխրոնիկա՝ Ներկայացնում է գրադարանի կատարած աշխատանքների լուսանկարներն, ըստ այդ իրադարձությունների:

Չինական անկյուն՝ Ներկայացնում է գրադարանի չինական անկյունը և գրադարանում իրականացված չինական միջոցառումները և տարատեսակ իրադարձությունները և նրանց տեսանյութերի հղումները:

Իրանական անկյուն՝ Ներկայացնում է գրադարանի իրանական անկյունը և գրադարանում իրականացված պարսկական միջոցառումները և տարատեսակ իրադարձությունները և նրանց տեսանյութերի հղումները:

Օրենսդրություն՝ Այստեղ կարելի է ծանոթանալ [«Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքին](#):

Կայքում կարելի է նավարկել աջ կողմում գտնվող պատուհանի միջոցով: Այդ պատուհանը ցանկության դեպքում կարելի է բացել և փակել: Բացի այս պատուհանում գտնվող որոշ բաժիններ կարելի է մուտք գործել անմիջապես գլխավոր էջից: Գլխավոր էջում է նաև գրադարանի հասցեն և նրա քարտեզը, կոնտակտային տվյալները և սպասվելիք իրադարձությունների անոնսները: Կայքը պարբերաբար թարմացվում է և նյութերում տեղի ունեցած փոփոխություններին անմիջապես շտկվում են: Կայքում չկան հնացած ու արդեն իրականության չհամապատասխանող տեղեկություններ: Կայքի գլխավոր էջի վերևի աջ անկյունից կարելի է մուտք գործել գրադարանի Ֆեյսբուքյան ու ՅուԹյուբյան էջերը:

Իսկ որքանո՞վ է գրադարանի կայքը համապատասխանում առաջադրվող չափանիշներին:

Բովանդակության խորությունը - Գրադարանի կայքի բովանդակությունը խորը չէ, սակայն տալիս է գրադարանի և նրա ծառայությունների մասին ամբողջական տեղեկություն: Կայքում տեղակայված նյութերը հիմնականում ընդհանուր տեղեկություններ են գրադարանի մասին: Գրադարանը տարվա ընթացքում կազմակերպում է մոտ 100 և ավելի մեծ ու փոքր միջոցառումներ, որոնց միայն մի մասն է տեղակայված կայքում: Կայքը չունի օրացույց, որտեղ նշված կլինեն գրադարանի կազմակերպած միջոցառումներն ու իրադարձությունները: Կայքում հիմնականում չեն տեղադրվում նաև հայտարարություններ գրադարանում ակնկալվող իրադարձությունների մասին: Գրադարանը տարվա ընթացքում

ստանում է 4500-ից մինչև 5000 միավոր գրականություն, այդ թվում նաև ամսագրեր, թերթեր, խտասալիկներ, սակայն այդ գրականությունը կայքում չի նշվում:

Նավարկման պարզությունը - Կայքում նավարկելը հեշտ է ու պարզ: Բաժիններով և ենթաբաժիններում տեղակայված տեղեկությունը համապատասխանում է իր վերագրին:

Տեղեկատվական պաշարների կայունությունը - Կայքի տեղեկատվությունը պարբերաբար թարմացվում է և համալրվում նորով: Կայքի թարմացման հաճախականությունը կախված է համապատասխան տեղեկատվության առկայությունից, այդ պատճառով այն թարմացվում է ու համալրվում, երբ կայքում առկա տեղեկատվության մեջ տեղի են ունենում փոփոխություններ կամ նորություններ:

Տեղեկատվության թարմացման արագությունը և հասանելիությունը - Կայքում տեղակայված հղումներն ակտիվ են և համապատասխանում են առկա իրավիճակին և գործուն են:

Գրադարանի դիմագրքի էջը - Գրադարանի կազմակերպած բոլոր միջոցառումներն ու իրադարձությունները տեղակայվում են գրադարանի դիմագրքային էջում: Իրականացվող միջոցառման մասին տեղեկացվող տեղեկատվությունը տեղադրվում է նախօրոք, իսկ միջոցառումից հետո ներկայացվում է միջոցառման կամ իրադարձության ֆոտոշարքը և նրա ամփոփումը, ինչպես նաև միջոցառման նպատակը: Այստեղ է նաև տեղակայվում տեղեկություն գրադարանի նոր ստացված գրքերի մասին: Տեղադրվում են գրքերի նկարները, ինչպես նաև համառոտ տեղեկություն գրքի մասին:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի կայքի առավելություններն ու թերություններն ընդգծելու համար համեմատել ենք հետևյալ գրադարանների կայքերի հետ.

- Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան
<http://www.isahakyanlibrary.am/#>
 - Շիրակի մարզային գրադարան <http://www.shirakreglib.am/>
 - Լոռու մարզային գրադարան <http://www.lmg.am/>
- Կայքերը համեմատվել են հետևյալ չափանիշներով.
- բովանդակության խորություն
 - նավարկման պարզությունը
 - տեղեկատվության թարմացման արագությունը

- հասանելիությունը

Համեմատենք այս գրադարանների կայքերի բովանդակությունը .

Բոլոր կայքերն ունեն գրադարանային կայքերին հատուկ ընդհանուր բաժիններ: Դրանք են՝ տեղեկություններ գրադարանի, նրա պատմության, կառուցվածքի ու բաժինների, գրադարանի աշխատաժամերի մասին, գրադարանի գտնվելու վայրի ու կոնտակտային տվյալների մասին:

Խնկո Ապոր գրադարանի կայքում առանձին նշված են գրադարանի չինական անկյունն ու պարսկական ընթերցասրահը, որտեղ մուտք գործելով կարելի է ոչ միայն ստանալ տեղեկություն այդ սրահների մասին, այլ նաև ծանոթանալ այդ սրահների կազմակերպած բոլոր միջոցառումներին: Խնկո Ապոր գրադարանի կայքը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն:

Իսահակյանի գրադարանն ունի Բրիտանական, Ասիական, Ամերիկյան և Ֆրանկոֆոնիայի կենտրոններ, որոնց մասին կան միայն ընդհանուր տեղեկություններ և հղումները դեպի այդ բաժինների դիմագրքային էջ, որտեղ էլ և կարելի է ծանոթանալ այդ բաժինների անցուդարձին: Գրադարանի կայքը եռլեզու է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Լոռու մարզային գրադարանն ունի ամերիկյան անկյուն, բայց նրա միջոցառումներն առանձին նշված չեն: Լոռու գրադարանի կայքը երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն:

Շիրակի մարզային գրադարանը նման բաժիններ չունի: Շիրակի մարզային գրադարանի կայքում յուրաքանչյուր սպասարկման բաժնի մասին տեղեկությունների ներքևի մասում կա տվյալ բաժնի ֆոնդի ցանկը էլեկտրոնային տարբերակով, որը կարելի է ներբեռնել: Գրադարանի կայքը միայն հայերեն է:

Օրացույց ունի միայն Շիրակի մարզային գրադարանը, սակայն այն դեռևս դատարկ է, նրանում ոչ մի իրադարձություն դեռ նշված չէ և բացի այդ այն չի գտնվում գլխավոր էջի վրա:

Միայն Իսահակյանի գրադարանի կայքում է, որ կարելի է նախօրոք տեղեկանալ գրադարանում տեղի ունեցող միջոցառումների մասին: Մյուս կայքերում տեղակայվում են արդեն տեղի ունեցած իրադարձությունները:

Իսահակյանի գրադարանը միակն է, որ ունի հիշարժան տարեթվերի օրացույց, որտեղ ամիս առ ամիս նշած են հիշարժան տարեթվերն ու հոբելյանները, նույն բաժնում ունի նաև հիշարժան օրեր բաժինը, որը չի համապատասխանում իր վերնագրին:

Լոռու մարզային գրադարանի կայքում ներկայացված են նոր գրքերի կազմերը և համառոտ տեղեկություններ այդ գրքերի մասին, սակայն վերջին ստացված նոր գրքերը թվագրված են 2014 թվականով, և բացի այդ ոչ բոլոր գրքերն են կայքում ներառված:

Իսահակյանի կենտրոնական գրադարանի կայքում նշված են միայն գրքերի հեղինակներն ու վերնագրերը: Վերնագիրը նույնպես չի համապատասխանում, քանի որ որպես վերնագիր նշված է 2017թ սեպտեմբեր ամսվա նոր գրքերը, սակայն ցուցակում ոչ միայն սեպտեմբեր ամսվա գրքերն են:

Կայքում նավարկելու հեշտությունը: Նավարկելու պարզությունը նշանակում է, որ օգտվողը կայքում նավարկելիս պետք է միշտ իմանա թե կայքի բաժնում է գտնվում և կայքի ցանկացած բաժնից պետք է կարողանա վերադառնալ գլխավոր էջ: Կայքից օգտվողը իրեն անհրաժեշտ տեղեկությունը գտնելու համար պետք է ունենա կայքում փնտրումներ անելու հնարավորություն: Չնայած, որ բոլոր գրադարաններից միայն Լոռու գրադարանի կայքում կարելի անել փնտրումներ, հիմնականում բոլոր գրադարանների կայքերում նավարկելը հեշտ է:

Տեղեկատվության թարմացման արագությունը: Կայքի թարմացման հաճախականությունից է կախված, որքան արդի և պահանջված կլինի կայքում տեղակայված տեղեկատվությունը: Նշված բոլոր կայքերն էլ պարբերաբար թարմացվում են:

Հասանելիությունը: Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի բոլոր հղումները գործուն են և ակտիվ են: Նորությունները պարբերաբար թարմացվում են, սակայն գրադարանի ոչ բոլոր իրադարձություններն են տեղակայվում կայքում


Բոլոր 4 կայքերն էլ ունեն իրենց թույլ և ուժեղ կողմերը

- Լոռու մարզային գրադարանի կայքն ունի որոնողական համակարգ և կայքում կարելի է տեսնել կայքի հաճախման վիճակագրական տվյալները, սակայն կայքում կան նյութեր, որոնք թարմացման կարիք ունեն
- Շիրակի մարզային գրադարանի կայքի գլխավոր էջում տեղակայված են ամենաշատ կարդացվող գրքերը
- Իսահակյանի գրադարանի կայքն ունի հիշարժան տարեթվերի օրացույց, էլեկտրոնային գրադարան, նրա կայքում կարելի է ծանոթանալ ամսվա ընթացքում գրադարանում տեղի ունեցող իրադարձություններին:

Իսկ այժմ ներկայացնենք Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի կայքի ու դիմագրքի ակտիվության վիճակագրությունը:


Գրադարանի կայքի ու դիմագրքի նպատակն է հնարավոր օգտվողների ուշադրությունը հրավիրել գրադարանի առաջարկած ծառայությունների օգտակարության և յուրահատկության վրա, այդ պատճառով շատ կարևոր է իմանալ նրանց կարծիքը գրադարանի կայքում և սոցիալական մեդիայում տեղադրված տեղեկատվության մասին: Այդ նպատակով սոցիալական հարցում ենք անցկացրել պարզելու համար թե արդյոք նրանք օգտվում են գրադարանի կայքից ու սոց. ցանցի գրադարանի էջում տեղակայված տեղեկությունից և արդյոք բավարարում է այն նրանց: Հարցմանը մասնակցել են 100 հոգի, որից 40 ուսանող, 22 աշակերտ՝ ավագ դպրոցի, 25 ծնող, 13 մանկավարժ: Հարցման մասնակիցներից միայն 3-ն էին արական սեռի ներկայացուցիչները, մյուսները պատկանում էին իգական սեռին:

Գծ ապատկեր 1




Այն հարցին թե արդյոք հետևում էք գրադարանի նորություններին այո՝ 39, ոչ՝ 15, մասամբ՝ 45, չպատասխանեց՝ 1: Փաստորեն մեծ մասը հետևում է գրադարանի նորություններին, բայց որ հաճախ: Քիչ չէ նաև այն մասնակիցների թիվը, ովքեր այս հարցին պատասխանել են դրական: Այսինքն՝ գրադարանում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ հետաքրքրություն կա:

Գծապատկեր 2
Հետևում եք գրադարանի նորություններին



Թե ինչ աղբյուրներից եք տեղեկանում գրադարանում կազմակերպվող միջոցառումների մասին հարցին պատասխանեցին հետևյալ կերպ. հեռախոսով՝ 13 գրադարանի կայքէջից՝ 32, գրադարանի դիմագրքից՝ 15, տեղեկատվական այլ աղբյուրներից՝ 21, դիմագիրք+կայք՝ 9, դիմագիրք+կայք+այլ՝ 2, չեն տեղեկանում՝ 7, պատահական՝ 1:


Գծապատկեր 3



Հաճախ ե՞ք օգտվում գրադարանի կայքից հարցին. այո՝ 22, ոչ՝ 42, մասամբ՝ 34, չեն տեղեկանում՝ 2: Հետևում եք գրադարանի դիմագրքի նորություն-

ներին պատասխանեցին այսպես. այո՝ 33, ոչ՝ 33, հազվադեպ՝ 30, չեմ տեղեկանում՝ 4


Գծապատկեր 4



Այստեղ հակասություն կա, քանի որ մասնակիցների մեծ մասը նշեց, որ տեղեկանում է գրադարանի նորություններին գրադարանի կայքից: Իսկ այստեղ մասնակիցների մեծ մասը նշել է, որ հաճախ օգտվում է դիմագրքից: Բացի այդ մասնակիցների մեծ մասը բացասական է պատասխանել կայքից օգտվելու հաճախականության մասին հարցին: Դիմագրքի դեպքում և դրական և բացասական պատասխանողների թիվը հավասար է: Այստեղից կարելի է ենթադրել, որ մասնակիցների մեծ մասը դիմագրքից ավելի շատ է օգտվում, քան կայքից:

Բավարարու՞մ է Ձեզ գրադարանի կայքէջի տեղեկատվությունը հարցին պատասխանեցին հետևյալ կերպ. այո՝ 52 , ոչ՝ 3, մասամբ՝ 22, չպատասխանեց՝ 23: Բավարարու՞մ է Ձեզ գրադարանի դիմագրքի էջը այո՝ 53, ոչ՝ 2, մասամբ՝ 21, չպատասխանեց՝ 24-ը: Այս երկու հարցերին տված պատասխաններից պարզ է դառնում, որ գրադարանի և կայքում և դիմագրքում տեղակայված տեղեկատվությունը հիմնականում բավարարվում է ընթերցողներին:


Գծապատկեր 5



Մասնակիցների կեսից ավելին փաստորեն նշեց, որ թե՛ կայքի և թե՛ ֆեյսբուքյան էջում տեղակայված տեղեկատվությունը նրանց բավարարում է:

Հետևում է գրադարանի ներսում տեղակայված հայտարարություններին այո՝ 69, ոչ՝ 30, չպատասխանեց՝ 1: Հետևում է դրսում տեղակայված գրադարանի պաստառներին այո՝ 65, ոչ՝ 32, չպատասխանեց՝ 1, երբեմն՝ 2:


Գծապատկեր 6



Այս աղյուսակից երևում է, որ մասնակիցները շատ են հետաքրքրվում գրադարանի անցուդարձով և նրանք ակտիվորեն հետևում են գրադարանի հայտարարություններին, քանի որ նրանց մեծ մասը դրական է պատասխանել այս հարցերին:

Կցանկանայի՞ք գրադարանի նորությունների ու միջոցառումների մասին տեղեկություն ստանալ էլ. փոստի միջոցով այո՝ 74, ոչ՝ 22, չպատասխանեց՝ 2-ը:

Գծապատկեր 7



Այստեղ ևս նկատվում է մասնակիցների հետաքրքրությունը գրադարանի կազմակերպած նորությունների ու միջոցառումների նկատմամբ, նրանց գերակշիռ մասն այս հարցին պատասխանել է դրական:

Ի՞նչ առաջարկներ ունեք հարցին հարցվողների մեծ մասը՝ 69 հոգի չպատասխանեց, 2-ը առաջարկեց կայքում տեղադրել նոր գրքերի ցուցակը, ևս 2-ը թողեց իր էլ. Փոստերի հասցեները, որպեսզի իրենց ուղարկվեն գրադարանի նորությունները, ոմանք էլ նշեցին, որ առաջարկ չունեն:

Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ մասնակիցների մեծ մասին հետաքրքրում է գրադարանի անցուդարձը և որ նրանք ուզում են տեղեկացված լինել գրադարանի կազմակերպած միջոցառումներին: Եվ չնայած, որ մասնակիցների մեծ մասը նշեց, որ գրադարանի նորություններին տեղեկանում է նրա կայքից, սակայն նրանց ավելի մեծ մասը նշեց, որ ոչ հաճախ է օգտվում կայքից և ավելի հաճախ նրանք օգտվում են գրադարանի դիմագրքից: Մասնակիցների մեծ մասը նշեց նաև, որ կայքում և դիմագրքում տեղակայված տեղեկատվությունը նրանց բավարարում է:

Արդյունքը ցույց տվեց, որ ընթերցողների մեծ մասը հիմնականում գոհ է գրադարանի կայքից ու դիմագրքից, սակայն նրանցից ոչ հաճախ են օգտվում, կան նաև մարդիկ, ովքեր տեղյակ չեն, որ գրադարանն ունի կայք և ֆեյսբուքյան էջ: Որպեսզի ընթերցողը այցելի գրադարանի կայքն ու ֆեյսբուքյան էջը պետք է

դրանք հարստացնել նոր նյութերով, որոնք կհետաքրքրեն գրադարանի ընթերցողներին: Մյուս գրադարանների փորձը այս գործում մեծ նշանակություն ունի: Քանի որ կայքի նպատակը ընթերցողների ուշադրությունը գրադարանի ծառայությունների վրա հրավիրելն է, կարևոր են նաև ընթերցողների ցանկությունները: Անհրաժեշտ է կատարել ավելի խորը ուսումնասիրություններ պարզելու համար թե ինչը առանձնապես կհետաքրքրի գրադարանի ընթերցողներին, ինչպես նաև նոր ընթերցողներ կներգրավի:

Խնկո Ապոր անվան մանկական գրադարանի կայքում և դիմագրքում ներկայացված են այն բոլոր իրադարձություններն ու նախագծերը, որոնք իրականացնում է գրադարանը: Սակայն գրադարանն ունի ուրիշ այլ ծառայություններ ու իրադարձություններ, որոնք ևս կարելի է փոխանցել վիրտուալ հարթակ: Գրադարանի կայքն ու դիմագրքի էջը ավելի հարստացնելու համար առաջարկում ենք հետևյալը.

- Ավելի շատ տեղեկացնել գրադարանի կայքի ու դիմագրքի էջի մասին հանրությանը: Նշել գրադարանի կայքը գրադարանի պաստառներում, գրադարանի շենքում հայտարարություն փակցնել, որում առաջարկել ծանոթանալ գրադարանի վեբջին նորություններին ու հետաքրքրող ծառայություններին գրադարանի կայքից կամ դիմագրքի էջից:
- Կայքում ներկայացնել գրադարանի նոր ստացած գրքերը: Գրադարանը տարվա ընթացքում համարվում է բազմաթիվ նոր ու հետաքրքիր գրականությամբ, որոնց մասին ընթերցողը կարող է ծանոթանալ նաև գրադարանի կայքից (նման ծառայություն առաջարկում են շատ գրադարաններ): Ներկայումս նոր ստացված գրականությունը ներկայացվում է միայն գրադարանի դիմագրքի էջում, սակայն նույնը կարելի է անել նաև կայքէջում:
- Կայքում տեղադրել միջոցառումների օրացույց
- Գրադարանը հրատարակում է հիշարժան տարեթվերը գրքույկը, որում նշվում են տարվա հոբելյարները և հոբելյար գրքերը: Կարելի է նաև տեղադրել այն գրադարանի կայքում և դիմագրքի էջում և ամեն անգամ տալ մի փոքր հետաքրքիր տեղեկություն օրվա հոբելյարի, հոբելյար գրքի կամ օրվա մասին:
- Տեղադրել այն կայքերի հղումները, որոնք կարող են հետաքրքրել երեխաներին, ծնողներին ու մանկավարժներին:

- Կայքում տեղադրել ճանաչողական տեսանյութ-գովազդ գրադարանի մասին և դիմագրքի էջում այն պարբերաբար տեղադրել, որպեսզի մարդկանց ժամանակ առ ժամանակ հիշեցնի գրադարանի ու նրա առաջարկած ծառայությունների մասին: Կայքում և սոցիալական ցանցերի էջերում տեղադրել գրադարանը գովազդող փոքր տեսահոլովակներ: Կատարել առցանց հարցումներ՝ պարզելու համար ընթերցողների նախասիրությունները:
- Կայքում տեղադրել տեղեկություն ազգային տոների ու ավանդույթների, գիտության և մշակույթի ոլորտում հայազգի հայտնի մարդկանց, նրանց ստեղծագործությունների ու նվաճումների մասին, ինչպես նաև այն գրականության ցանկը, որ գրադարանը ունի նրանց մասին: Ներկայացնել օրվա հոբելյար գրողներին, ինչպես նաև այդ գրողի այն գրքերը, որը գրադարանն ունի և կարող է առաջարկել ընթերցողին:
- Էլ փոստով Տեղեկացնել ընթերցողներին գրադարանում սպասվող միջոցառումների, նորությունների ու նախագծերի մասին
- Կայքում տեղադրել նաև մանկական ստեղծագործություններ, այդ ձևով խրախուսելով նրանց ստեղծագործելու: Կայքում տեղադրել նաև նյութեր նախատեսված երեխաների համար կամ հղումներ դեպի երեխաների համար հետաքրքիր ու ուսանելի կայքեր օր. Որոշ գրադարանների կայքերում կարելի գտնել զվարճալի, հետաքրքիր ու ուսուցողական խաղեր տարբեր տարիքի երեխաների համար
- Տեղադրել հղումներ դեպի այն ֆիլմերը, մուլտֆիլմերն ու հաղորդումները, որոնք նախատեսված են երեխաների համար: Անհրաժեշտ է երեխաներին ճիշտ կողմնորոշել թե ինչ կա համացանցում նախատեսված իրենց համար

SUMMARY

The website and social networking site page of Khnko Aper National Children's Library contain complete information about the library, which is important for satisfying the readers requirements. The article represents the characteristics of the library website and social networking page and compare them with websites and social networking pages of the other libraries in Armenia thus exposing their strong and weak sides. The results of the social poll revealed that the most of the patrons are familia with the library's website and the Facebook page.

ՕՀԱՆ ՉՈՒԲԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բանալի բառեր՝ Մարզային գրադարան, գրադարանի պատմություն, հավաքածուներ, սպասարկում, միջոցառումներ:

Keywords. Regional library, library history, collections, service, events.

Արարատի մարզային գրադարանը ստեղծվել է 1948 թ. փետրվարին՝ Արտաշատ ավանի խրճիթ-ընթերցարանի գրականության, ինչպես նաև նախկին կուսակցական շրջանային կոմիտեի կողմից նվիրված քաղաքական բնույթի մի քանի հարյուր միավոր գրքերի հիման վրա: Գրադարանը տեղակայվել է Սահակյանների մասնավոր սեփականություն համարվող շենքում, ուր գտնվում էր նաև Արտաշատի ժողովրդական դատարանը:

Գրադարանի ֆոնդը 1956 թ. կազմել է 12.000 միավոր, ունեցել է 2 աշխատող: 1957 թ. Արտաշատի շրջանային գրադարանը փոխադրվել է ներկայիս փոստի շենքի տեղում գտնվող միհարկանի վերանորոգված նոր շենք:

Գրադարանի գործունեության բեղուն շրջանը սկսվել է 1958 թվականից, երբ աշխատակիցները վերանայել են առաջադրված չափորոշիչները և վերակազմակերպել գրադարանի աշխատանքները՝ դառնալով նաև մեթոդական աշխատանքների կազմակերպման կենտրոն շրջանի բոլոր գրադարանների համար: 1971 թ. շրջանային գրադարանը տեղափոխվել է ներկայիս գրադարանի տեղը՝ քաղաքի բանուկ փողոցի նոր բնակելի շենք՝ զբաղեցնելով 500 քմ. տարածք՝ ընդարձակ, լուսավոր բաժիններով, առանձին սպասասրահով և ընթերցասրահով: 1976-1996 թթ շրջանային գրադարանի բազայի վրա ստեղծվել է պետական մասսայական գրադարանների հզոր ցանցը, որը հնարավորություն է տվել Արտաշատում ստեղծել գրադարանային ժամանակակից խոշոր համակարգ՝ 45 մասնաճյուղ գրադարաններով: Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ կառավարության որոշումից հետո հանրային բնույթի գրադարանները հանձնվել են տեղական համայնքներին: Իսկ կառավարության 1997 թ. ապրիլի 30-ի որոշմամբ մարզկենտրոններում գործող ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանները վերակազմավորվել են նախ որպես Արարատի մարզային հանրապետական գրադարանի, ապա «Արարատի մարզա-

յին գրադարան» ՊՈԱԿ, որպես մշակութային, կրթական, տեղեկատվական կենտրոն մարզի շուրջ 90 համայնքային գրադարանների համար: 1977 թ. հունվարի 11-ին ՀԽՍՀ նախարարների խորհրդի որոշմամբ Արտաշատի շրջանի ԳԿՀ-ի կենտրոնական գրադարանը, իսկ ՀՀ կառավարության 2004 թ. 20 մայիսի N 751-ն որոշմամբ Արարատի մարզային գրադարանը անվանակոչվել է գրադարանային գործի մեծ երախտավոր, հմուտ տեսաբան, կազմակերպիչ Օհան Ստեփանի Չուբարյանի անունով:

1948 թվականից մինչ այսօր գրադարանի վարիչ կամ տնօրեն են նշանակվել Ազիզ Դերմոյանը (1948-1955), Լենա Դանիելյանը (1955-1956), Յուլակ Հասարայանը (1956-1976), Էմմա Բադալյանը (1976-1979), Յուրա Պետրոսյանը (1979-2016), Վաչագան Պետրոսյանը (2016 թ. հուլիսից):

Արարատի մարզային գրադարանը հանդիսանում է մարզի գլխավոր պետական գրադարանը, որը իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի պահպանումը, համալրումը, մշակումը, գրադարանային տեղեկատվական մատենագիտական սպասարկման կազմակերպումը, մարզի գրադարանների զարգացման գիտական և մեթոդական աջակցության ապահովումը: Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

ա. Հրատարակչական գործունեություն:

բ. Համակարգչային ծառայություններ:

«Արարատի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ը, որպես մարզի մշակութային, տեղեկատվական ու կրթական կենտրոն, ապահովելով գրքի ու գրականության առկայությունն ու սպասարկումը, գրքի ու գրականության սպասարկման, գրադարանային բնագավառի աշխատանքները նպատակաուղղում է հիմնականում գրադարանային հավաքածուների պահպանմանն ու համալրմանը, ընթերցողի հետ գրքի ու գրականության սպասարկմանն ու մասսայական գրական միջոցառումների կազմակերպմանը, մատենագիտական-տեղեկատվական, համակարգչային շտեմարանների ու կրիչների ստեղծմանը, էլեկտրոնային սպասարկմանն ու տվյալների մուտքագրմանը, ներհամակարգային ու միջգրադարանային բաժնույթի ծառայության կազմակերպմանը, մարզի համայնքային գրադարանների, տեղական կառավարման մարմինների ու կրթական օջախների հետ համագործակցված աշխատանքներին ու ծրագրերի իրագործմանը, մարզի ազգաբնակչության գրքի առևտրի, գրական տարաբնույթ միջոցառումների կազմակերպմանը:

Մարզային գրադարանում ՀՀ մշակույթի նախարարության և Արարատի մարզպետարանի կողմից իրականացվող մշակութային քաղաքականության շնորհիվ մարզում և Արտաշատ քաղաքում գրքի սպասարկման, ընթերցողների ընթերցանության կազմակերպման աշխատանքները գտնվում են պատշաճ հիմքերի վրա, գրադարանի աշխատանքները ավելի համահունչ են ժամանակի ոգուն, որով իսկ գրադարանն ունի իր ակտիվ տեղն ու դերը մարզի մշակութային-գրական կյանքում:

Նշված աշխատանքներին նպաստում է նաև ՀՀ մշակույթի նախարարության օգնությունն ու միջամտությունը՝ գրադարանում վերջին տարիներին իրականացված գրադարանի հիմնարար վերանորոգումը, ջեռուցման և ազդանշանային համակարգերի տեղադրումը և այլն: Այդ աշխատանքների օրգանական շարունակությունն է նաև գրադարանի նոր գույքի ու սարքավորումների /մասնակի/ ձեռք բերումը, որը 2012-2013 թթ. իրականացվել է նախարարության նորակառույց «Մշակութային ծրագրերի իրականացման պետական գրասենյակ» ՊՈԱԿ-ի կողմից:

Գրադարանի ֆոնդերը համալրվում են տպագիր արտադրանքի գրեթե բոլոր տեսակներով՝ գրքեր, գրքույկներ, ատլասներ, պարբերական և շարունակական հրատարակություններ, տեղեկատու և հանրագիտարանային բնույթի ունիվերսալ տեսակի գրականությամբ: Գրադարանը իրականացնում է գրադարանային գործի բնագավառի պետական քաղաքականություն: Այն 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ունի 101.718 միավոր գրականություն՝ տեղակայված հիմնականում սպասարկման բաժնում՝ 47.446 միավոր, գրապահոցում՝ 23.797 միավոր, տեղեկատվական բաժնում՝ 1831 միավոր, մանկական բաժնում՝ 14.553 միավոր, ընթերցասրահում՝ 14.141 միավոր:

Գրադարանի բաժիններն են՝

Համալրման, մշակման և պահպանման բաժին - իրականացնում է տպագիր արտադրանքի հավաքածուի համալրում գնումների, նվիրաբերությունների, գրքափոխանակության միջոցով, ինչպես նաև ՀՀ տարածքում հրատարակված ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված գրականության պարտադիր օրինակներով: Գրադարանում հաշվառվում, մշակվում, համակարգվում են մուտքագրվող նյութերը և գրանցվում տվյալների շտեմարանում: Բաժնի աշխատակիցների թիվը 3-ն է: Վերջին հինգ տարիների ընթացքում ձեռք է բերել շուրջ 6800 միավոր գրականություն: ՀՀ մշակույթի նախարարության կողմից 2013-2017 թթ. ընթացքում մարզի համայնքային գրադարաններին պետպատվերով անվճար

հատկացվել է մոտ 9.200 միավոր արժեքավոր գրականություն, որը բաշխվել է շուրջ 80 համայնքային գրադարանների:

Սպասարկման բաժին – իրականացնում է գրադարանի սպասարկման գործառույթները՝ ընթերցողներին գրականությունը տրամադրելով առանց սահմանափակումների, մատուցում է գրադարանային տարբեր բնույթի ծառայություններ, հետևում է տպագիր արտադրանքի հավաքածուի ամբողջականությանն ու ապահով պահպանությանը, սահմանում է գրադարանից օգտվելու կարգը, օգտվողների կողմից պատճառված վնասի փոխհատուցման ձևերն ու չափերը: Ձևավորում է տպագիր արտադրանքի փոխանակման հավաքածու: Ներկայումս գրադարանի հավաքածուներից օգտվում են շուրջ 4000 ընթերցողներ: Սպասարկման տացքը տարեկան կտրվածքով կազմում է շուրջ 83.000 միավոր, հաճախումը՝ 23.560: Սպասարկման բաժնում առանձնանում են հետևյալ ենթաբաժինները.

ա. Բաժնույթի ենթաբաժին

բ. Ընթերցասրահ

գ. Մանկական ենթաբաժին

Բաժինն ունի 9 աշխատակից:

Տեղեկատվության և հանրության հետ կապերի բաժին - իրականացնում է գրադարանային տեղեկատվական-մատենագիտական աշխատանք, գրադարանից օգտվողներին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն: Բաժինը հանդիսանում է մարզի 97 համայնքների և 112 դպրոցական գրադարանների համար մեթոդական, տեղեկատվական, կրթական կենտրոն: Ունի 3 աշխատակից:

Յուրաքանչյուր տարի մարզային գրադարանը հանդես է գալիս տարաբնույթ միջոցառումներով: Կազմակերպվում են գրական միջոցառումներ, գրքային ցուցահանդեսներ, մեծարման երեկոներ, գրական ցերեկույթներ, գրքերի մատենագիտական տեսություններ ու շնորհանդեսներ, հանդիպումներ գրողների, բանաստեղծների, արվեստի և գրականության, կրթության և մշակույթի անվանի գործիչների հետ: Գրադարանը ակտիվորեն է մասնակցում յուրաքանչյուր տարի կազմակերպվող «Ազգային գրադարանային շաբաթ» միջոցառմանը:

Գրադարանային գործի ավտոմատացման և էլեկտրոնային սպասարկման բաժին - Բաժնի խնդիրներից է ՀՀ կառավարության կողմից հաստատված և ՀՀ մշակույթի նախարարության կողմից հանձնարարված հանրային գրադարանների հավատարմագրման գործը: 1994-2015 թթ. հավատարմագրվել են Արարատի մարզային, Վեդու և Արտաշատ քաղաքի գրադարանները, որոնք ստացել են հավաստագրեր: 2015 թ. փետրվարից մասնակցել է Գրադարանային համահավաք

գրացուցակի կազմման աշխատանքներին՝ մուտքագրելով 35.262 միավոր գրականություն:

Բաժինն իրականացնում է նաև ընթերցողների ինտերնետային համակարգչային ծառայություն, համակարգչային օպերատորական տարաբնույթ աշխատանք:

Վարչական մաս – բաղկացած է 8 աշխատակցից:

Արարատի մարզային գրադարանը հրատարակել է մի շարք կարևոր ձեռնարկներ՝ «Հուշամատյան» (1996 թվականից), «Մեր քարեղեն ոգին»՝ նվիրված Արցախյան հերոսամարտում նահատակված արտաշատցի ազատամարտիկներին (1996 թ.), գրական ուղեցույցներ՝ «Պարույր Սևակ» (1999 թ.), «Սպարապետ Վազգեն Սարգսյան» (1999 թ.), «Գուսան Հայկազուն» և այլն:

SUMMARY

The Ararat Regional Library after Ohan Chubaryan was established in 1948. It is the main state library in the province which is in charge for acquisition and preservation, on the regional level of printed collections, and also organizes library information bibliographic services, supports scientific and methodological work in province libraries.

The library implements state policy in the field of librarianship. As follows January 1, 2018 the library collections include 101,718 units of literature, of which 47,446 are in the circulation department, 23,797 in the depository, 1,831 in the information department, 14,553 in the children's department and 14,141 are in the reading room.